



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Քաղաքական Կայունության ճանապարհին

Դեկտեմբեր 9-ին տեղի ունեցավ Քաղաքական Կայունության ճանապարհին շարքի 100-ամեակին նուիրված ձեռնարկներու ծիրանակալը Կայունության ճանապարհին շարքի 100-ամեակին նուիրված ձեռնարկներու ծիրանակալը Կայունության ճանապարհին շարքի 100-ամեակին նուիրված ձեռնարկներու ծիրանակալը...

Միև կողմէ, նախկին իշխանության մնացորդները, որոնք կը շարունակեն հանդէս գալ ԶԳԿ-ի անունով, բաւական ոգեւորուած կը թուին ըլլալ, յայտարարելով թէ կը յաւակնին դառնալ խորհրդարանէն ներս երկրորդ ուժը:

Յարապարակի վրայ է նաեւ մեծահարուստ գործարար Գագիկ Ծառուկեանի գլխաւորած Բարգաւաճ Յայաստան կուսակցութիւնը, որ ինք եւս կը ծգտի երկրորդ տեղին:

Այսօրուայ դրութեամբ բոլոր քաղաքական ուժերն ալ համոզուած են, որ յեղափոխութիւնը առաջնորդած Փաշինեանի կուսակցութեան յաղթանակը անխուսափելի է եւ միակ հարցականը կը մնայ տոկոսներու պարագան: Գիմնուելով երկու ամիս առաջ տեղի ունեցած Երեւանի քաղաքապետական ընտրութիւններու արդիւնքներուն վրայ, կանխատեսութիւնը այն է որ այդ կուսակցութիւնը պիտի ստանայ ժողովուրդի առնուազն 70 տոկոսի ձայները:

Յեղափոխութենէն ետք բոլորի մօտ կար այն սպասումը, որ յաջորդ խորհրդարանական ընտրութիւնները պիտի ըլլան ազատ ու արդար եւ պայքարը պիտի ընթանայ միմիայն գաղափարական դաշտի վրայ: Հակառակ բոլոր ջանքերուն, կարելի չեղաւ ընտրութիւններէն առաջ փոփոխութեան ենթակելը ընտրական օրէնսգիրքը եւ իրականացնել ժողովուրդի ակնկալիքները:

Թէեւ, Գաղափարական որոշ սկզբունքներ կրող կուսակցութիւններու հեռացումը ընտրական գործընթացէն, կորուստ պիտի ըլլայ Յայաստանի համար, Սակայն յեղափոխութիւնը իր աւարտին հասցնելու եւ երկրէն ներս կայունութեան հաստատման ճանապարհին յառաջիկայ ընտրութիւնները կը հանդիսանան միակ ելքը:

«ՄԱՍԻՍ»

Նիկոլ Փաշինեան. «Մենք Չենք Կրնար Փոխել Պատմութիւնը, Բայց Պատմութիւնը Կրնայ Փոխել Մեզ»



Վարչապետ Փաշինեան ելոյթ կ'ունենայ «Փարիզի խաղաղութեան համաժողովի» ընթացքին

Առաջին աշխարհամարտին կնքուած գինադադարի 100-ամեակին նուիրուած ձեռնարկներու ծիրանակալը Կայունության ճանապարհին շարքի 100-ամեակին նուիրված ձեռնարկներու ծիրանակալը Կայունության ճանապարհին շարքի 100-ամեակին նուիրված ձեռնարկներու ծիրանակալը...

Փոխել պատմութիւնը, եւ ատոր կարիքն ալ չկայ: Բայց պատմութիւնը կրնայ փոխել մեզ, որ մեր ապագան աւելի լաւ դառնայ», - յայտարարեց Հայաստանի կառավարութեան ղեկավարը, շարունակելով,- «Այդ իսկ պատճառով՝ մենք պէտք է յիշենք առաջին աշխարհամարտի կարեւորագոյն դասը: Որեւէ պետութիւն չի կրնար իր շղջութիւնը կառուցել ուրիշներու թշուառութեան վրայ, ոչ ոք կրնայ ազատութիւն ձեռք բերել

Շար.ը էջ 5

ՀՀ Գլխաւոր Հիւպատոս Արմէն Պայպուրեան Այցելեց ՍԴՀԿ Գրասենեակ



ՀՀ գլխաւոր հիւպատոս Արմէն Պայպուրեան ՍԴՀԿ գրասենեակէն ներս

Ուրբաթ, Նոյեմբեր 9-ին, ՍԴՀԿ Կլէնտէլի գրասենեակը այցելեց Լոս Անճելըսի մէջ Հայաստանի Հանրապետութեան նորանշանակ գլխաւոր հիւպատոս Արմէն Պայպուրեան, ընկերակցութեամբ Հիւպատոսութեան երկրորդ քարտուղար՝ Կանա Յովհաննիսեանի:

Ունեցան ՍԴՀԿ վարիչ Մարմինի անդամներուն, Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Հայ Մարմնամարզական Միութեան եւ Հայ Ամերիկեան Խորհրդի ներկայացուցիչներուն կողմէ: Վարիչ Մարմինի ատենապետ

Շար.ը էջ 5

ՍԴՀԿ ԿԿ Ատենապետ Համբիկ Սարաֆեանի Հանդիպումները Լիբանանի մէջ



ՍԴՀԿ ԿԿ ատենապետ Համբիկ Սարաֆեան ելոյթ կ'ունենայ Պէյրուսի մէջ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան Լիբանան կատարած իր այցելութեան ընթացքին ունեցաւ հրապարակային ելոյթ եւ հանդիպումներու շարք մը կրօնական առաջնորդներու եւ քաղաքական ղեկավարներու հետ:

Ընկ. Սարաֆեան ընկերակցութեամբ Կեդրոնական վարչութեան անդամ անդամ Ընկ. Ալեքսան Բէօշկէրեանի եւ ՍԴՀԿ Լիբանանի շրջանի վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Սեպուհ Գալիաքեանի, այցելեցին Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Հանդիպումը աւիթ եղաւ ընդհանուր վերաբերում մը կատարելու հայ ժողովուրդը, հայրենիքը, եկեղեցին ու Սփիւռքը յուզող հարցերուն ու դիմագրաւող մարտահրաւերներուն շուրջ: Վեհափառ Հայրապետը եւ կուսակցութեան պատուիրակութեան անդամները կարեւորութեամբ շեշտեցին, որ տեսակետներու եւ շեշտաւորումներու տարբերութիւնները պահելով հանդերձ, թէ՛ ներհայաստանեան, թէ՛ միջկուսակցական եւ թէ՛ Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց առնչութեամբ անհրաժեշտ է հայ ժողովուրդին միասնականութիւնը ամրապնդել ու ծաւալել՝ ի խնդիր Հայաստանի առաւել հզօրացման ու ծաղկման:

Պատուիրակութիւնը տեսակցեցաւ նաեւ Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Գրիգոր Պետրոս Ի. պատրիարք-կաթողիկոսին եւ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեանի հետ: Տեսակցութիւններուն ընթացքին մանրամասնօրէն արծարծուեցան Հայաստանի նորա-

Շար.ը էջ 5

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Յանցագործների Ցուցակը. Ինչ Պետք է ճանաչի ՀՀ-ում

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

ՀՀ խորհրդի նիստից յետոյ արուած յայտարարութեան առնչութեամբ հասարակութեան տարբեր խմբերի դիտարկումներում մասնագոյց է արուած այն, որ ՀՀ-ն չի գտել սեփական սխալները լիարժէք ու բաց խոստովանելու ուժ եւ փորձել է մանեւրել:

Նախ, առանձին հարց է իհարկէ, թե որտեղից պէտք է գտնել ՀՀ-ն այդ ուժը: Կամ, աւելի շուտ հարցը պէտք է դնել այլ կերպ՝ իսկ ՀՀ կա՞յ, որ գտնի իր իշխանութեան տարիներին սխալները լիարժէք խոստովանելու, դրանց համար ներողութիւն խնդրելու ուժ:

Անունով ՀՀ կայ, գոյութիւն ունի Մելիք Ադամեանի գրասենեակը, այնտեղ տեղի է ունեցել ՀՀ խորհրդի նիստը, որը որոշել է, թէ կուսակցութիւնը մասնակցելու է խորհրդարանի արտահերթ ընտրութեանը, նաեւ առաջին համարն է կարծես թէ յայտնի, մի քանի այլ մասնակիցներ, ցուցակի անուններ:

Համար վճարում ընտրութեամբ եւ հեռանում իշխանութիւնից:

ՀՀ կորպորացիա-հասարակութիւն յարաբերութեան առանցքում եղել է յանցանքը, ոչ թէ սխալը: Հայաստանում հանրութիւնը կանգնած է յանցանքի, տարբեր տրամաչափի եւ ծաւալի յանցագործութիւնների, ոչ թէ սխալի հետեւանքի առաջ: Ըստ այդմ, հանրութիւնը նախորդ համակարգից ակնկալում է ոչ թէ ընտրական ցուցակներ, այլ այն յանցագործների ցուցակը, որոնք Հայաստանի հանրապետութիւնը պարտւել են կոռուպցիոն սխեմաներով եւ ուղղակի շնչահեղ արել պետական օրգանիզմը, այդ ընթացքում կոռուպցիոն անձնական ահուկի հարստութիւն: Այդ ամէնը տեղի է ունեցել քաղաքական հովանու ներքոյ, կամ քաղաքական կամքի բացակայութեան պայմաններում:

Հետեւաբար, ՀՀ-ն էլ կանգնած է իր կառավարման տարիների յանցանքը, ոչ թէ սխալը ճանաչե-

Հանրութիւնը նախորդ համակարգից ակնկալում է ոչ թէ ընտրական ցուցակներ, այլ այն յանցագործների ցուցակը, որոնք Հայաստանի հանրապետութիւնը պարտւել են կոռուպցիոն սխեմաներով եւ ուղղակի շնչահեղ արել պետական օրգանիզմը, այդ ընթացքում կուսակցելով անձնական ահուկի հարստութիւն:

Բայց ՀՀ խորհրդի նիստը անցել է բաւական բուռն, իսկ դրանից առաջ ժամանած մասնակիցների տարաբնոյթ պատասխանները լրագրողներին, նիստի ընթացքում եւ յետոյ տեղի ունեցած մի քարք դրուակներ վկայել են, որ իբրեւ մէկ սուբիեկտ՝ ՀՀ, գոյութիւն չունի վաղուց:

ՀՀ-ն եղել է իշխանութեան շուրջ միաւորուած խմբերի մի մեծ կորպորացիա: Իշխանութիւնը կորցնելուց յետոյ այդ կորպորացիան փլուզուելու էր ինքնաբերաբար: Հետեւաբար, սխալների առումով օրինակ առաջանում է հարց՝ ով ում սխալը պէտք է ճանաչի եւ ներողութիւն խնդրի: «Քաղաքականներն», օրինակ, ասում են, թէ իրենք կոռուպցիոն անհրաժեշտ են հետեւաբար անարդար է իրենց մեղադրելը: Բայց, «ոչ քաղաքականներն» էլ ըստ երեւոյթին խորհրդի նիստերի ընթացքում են ասում, որ «քաղաքականներին» իրենք են պահել իշխանութեան, այդ թւում կոռուպցիոն օգնութեամբ, որից նաեւ բաժին են հանել քաղաքականներին կամ նրանցից շատերին:

Սա իհարկէ ՀՀ ներքին յարաբերութեան խնդիր է, բայց այստեղ է նաեւ առանցքային պատճառներից մէկը՝ թէ ով ում սխալի համար պէտք է ներողութիւն խնդրի:

Միւս կողմից, հարցի թերեւս բուն ասպեկտը այլ դաշտում է: Բանն այն է, որ ՀՀ կորպորացիա-հասարակութիւն յարաբերութեան խնդիրը սխալները չեն եղել: Սխալում է ցանկացած ուժ, ցանկացած իշխանութիւն, այդ սխալի

լու իրողութեան առաջ: Իհարկէ, յանցանքը ճանաչելը ինքնակամ խոստովանութիւնն է: Միաժամանակ անհրաժեշտ է թւում, թէ ՀՀ-ն ինքնակամ կը խոստովանի, որ երկու տասնամեակ եղել է յանցաւոր կառավարման թիւ մէկ ուժը եւ պատասխանատուն: Առաւել եւս, որ յանցանքը ենթադրում է շատ կոնկրետ պատասխանատուութիւն, իսկ այս դէպքում խօսքը կարծես թէ քաղաքական գնահատականի մասին է:

Այդպէս է, բայց բանը հենց քաղաքական գնահատականն է: Այն ենթադրում է ոչ միայն սխալի ճանաչում եւ ներողութիւն հանրութիւնից: Այն ենթադրում է նաեւ կոչ իրավապահներին՝ անաչառ, օրէնքի դաշտում քննել ՀՀ կառավարման տարիներին առնչուող բոլոր կասկածելի դրուակները եւ բացայայտել յանցագործներին:

Դրա փոխարէն, ՀՀ-ն այնպայպ քաղաքական հետապնդում է որակում այդպիսի ցանկացած փորձ, ցանկացած քայլ, երբ իրավապահները անգամ ոչ ՀՀ անդամի, բայց նախկին համակարգի այս կամ այն առանցքային խմբին առնչուող որեւէ մէկի հանդէպ սկսում են իրաւական գործընթաց:

Այդ պահուածքը անշուշտ հասկանալի է, բայց հարցն այն է, որ տուեալ համատեքստում սխալներն ընդունելու եւ ներողութեան հանգամանք կարող է առաւելագոյնը լինել «կամուֆլիա», որովհետեւ խնդիրը սխալը չէ, այլ յանցանքը:

«ԼՐԱԳԻՐ»

Վիզէն Սարգսեանի Բոնուսը Լուկաշենկոյին ու Նազարբաեւին

ԱՐԱՄ ԱՍՏՏՈՒՆԻ

Պաշտպանութեան նախկին նախարար, ՀՀ նախընտրական ցուցակի գլխաւոր Վիզէն Սարգսեանը յայտարարել է, որ եթէ Հայաստանը չկարողանայ պահել ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի քվոտան, ապա դա կը լինի արտաքին քաղաքական լուրջ ճախողում:

Վիզէն Սարգսեանի այդ յայտարարութիւնն օրիգինալ չէ, քանի որ այդ շեշտադրումն անում են նաեւ մի շարք փորձագէտներ ու այլ ՀՀ-ականներ: Բայց օրիգինալութեան տարր այստեղ, այդուհանդերձ, կայ՝ հենց հաշուի առնելով այն, որ անյաջողութեան մասին խօսում է Վիզէն Սարգսեանը:

Բանն այն է, որ պաշտպանութեան նախկին նախարարը դեռեւս 2017 թուականին, երբ դեռ պաշտպանութեան նախարար էր, բաւականին ուշադրաւ կարծիք էր յայտնել Յուրի Խաչատուրովի՝ ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար լինելու մասին: Նա ասել էր, որ Խաչատուրովը չի կարող գործել ՀԱՊԿ անդամ պետութիւնների քա-

ղնողիմութիւն է, պէտք է կ'անգնի Հայաստանի պետական շահի դիրքում, ոչ թէ Ատրպէյճանին հաշուետու լոբբիստ Լուկաշենկոյին: Իսկ Հայաստանի պետական շահն այդ դէպքում պահանջում է իրերը կոչել իրենց անունով եւ արձանագրել, որ Հայաստանի քվոտայի խնդրում ՀԱՊԿ, այսպէս ասած, մերժումը կամ ՀԱՊԿ որոշ անդամների, ոչ թէ Հայաստանի արտաքին քաղաքական անյաջողութիւնն է, այլ ՀԱՊԿ, այսպէս ասած, չկայացածութիւնը որպէս ռազմաքաղաքական դաշինք: Այն, ինչի մասին մի շարք անգամներ ակնարկել է նրա կուսակցապետ Սերժ Սարգսեանը, բայց չի համարձակուել յայտարարել ուղիղ տեքստով:

Եւ եթէ իշխանութեան կարգավիճակը արդարացում էր այդ օրինակ ուղիղ տեքստի եւ իրերը իրենց անունով կոչելու կեցուածքը, ապա ընդդիմութեան կարգավիճակում այդ կեցուածքը չունենալն ու կարեւորագոյն հարցում Հայաստանի իշխանութեանը չփաստարկուած քննադատելն ու Հայաստանի դէմ դաւադրութեանը

ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի պաշտօնի հանդէպ դիրքորոշումը վկայում է, որ Վիզէն Սարգսեանը եւ նրա հետ ընդդիմութեան յաւակնորդները իրականում անկարող են զբաղեցնել այդ դիրքը, յամենայնդէպ՝ հանրային եւ պետական շահի տեսանկիւնից

ղաքականութիւնից անկախ, ըստ այդմ՝ ոչ միայն միարժէք չէ այդ քվոտայից Հայաստանի օգուտը, այլեւ հակառակը՝ երբ հայաստանեան ներկայացուցիչ գլխաւոր քարտուղարը անի որեւէ յայտարարութիւն, Ատրպէյճանը, օրինակ, դա կը վերագրի հենց նրա՝ Հայաստանից լինելուն: Այդպիսով, Վիզէն Սարգսեանն արդարացիօրէն ակնարկել էր, որ ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի քվոտան միայն առերեւոյթ, թուացեալ յաջողութիւն է, իսկ բուն քաղաքականութեան մասով դրանից չկայ ակնկալուող շօշափելի օգուտ:

Հիմա պարզուած է, որ ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի ոչինչ չտուող քվոտան կորցնելը կարող է լինել արտաքին քաղաքական անյաջողութիւն:

Իհարկէ, աւելորդ է խօսել այն մասին, թէ ինչու է Վիզէն Սարգսեանը հիմա այլ բան կարծում: Որովհետեւ նա այլեւս պաշտօնեայ չէ, նա իշխանութեան բարձրաստիճան կրող չէ, նա Սերժ Սարգսեանի իշխանութիւնը ժառանգելու յաւակնորդ չէ: Նա հիմա ընդդիմութիւն է, այն էլ իր խօսքով՝ միակը:

Սակայն միւս կողմից՝ հենց ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի պաշտօնի հանդէպ դիրքորոշումը վկայում է, որ Վիզէն Սարգսեանը եւ նրա հետ ընդդիմութեան յաւակնորդները իրականում անկարող են զբաղեցնել այդ դիրքը, յամենայնդէպ՝ հանրային եւ պետական շահի տեսանկիւնից: Որովհետեւ երբ Բելառուսի նախագահ Լուկաշենկոն ընդունում է Ատրպէյճանի դեսպանին ու հաշուետուութիւն տալիս Աստանայում ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի հարցի քննարկման վերաբերեալ, Հայաստանի ընդդիմութիւնը՝ եթէ այն պետութեան շահից, ոչ թէ ընդամէնը իշխանութեան կորստի «ցաւից» բխած

փաստացի աջակցելը, մեղմ ասած, տարօրինակ է եւ աղերս ունի ոչ թէ ընդդիմութիւն հասկացութեան հետ, այլ այդ վերջածանցով այլ հասկացութիւնների:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԳՆԱՍՏԱՆԻ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հանրապետականները կը Յաւակնին Գալիք Խորհրդարանին Մէջ Ըլլալ Երկրորդ Քաղաքական Ուժը

Ժողովրդական ճնշմամբ իշխանութեան հեռացած հանրապետականները կը կարծեն, թէ այսօր իրենք միակ իրական ընդդիմութիւնն են, եւ կը յաւակնին գալիք խորհրդարանին մէջ ըլլալ մեծութեամբ երկրորդ ուժը: Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ շուրջ հինգ ժամ տեւած խորհուրդի նիստէն ետք պաշտպանութեան նախկին նախարար Վիգէն Սարգսեանը յայտարարած է՝ Հանրապետականը իր առաջնորդութեամբ պիտի մասնակցի Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններուն:



Պաշտպանութեան նախկին նախարար Վիգէն Սարգսեան

«Ի վերջոյ, յառաջիկայ ընտրութիւններում չի որոշուում, թէ ով է լինելու իշխանութիւն՝ այդ հարցը կարծես թէ արդէն որոշուած է, եւ կարծում եմ, որ այն վարչապետը, որին հրապարակում հաւաքուած մեր համաքաղաքացիները մատնանշեցին որպէս ժողովրդի թեկնածու եւ որին Ազգային ժողովը տուեց այդպիսի հնարաւորութիւն, պէտք է շարունակի կատարել այն պարտականութիւնը, որը ստանձնել է: Ինքը ունի ապացուցելու բան, ինքը ունի աշխատանք կատարելու, եւ մենք պատրաստ ենք որպէս ընդդիմութիւն ապագայ խորհրդարանում հաւասարակշռել դա», - ըսած է Սարգսեանը:

«Ես կարծում եմ, որ եթէ Նիկոլ Փաշինեանը ազնիւ է իր ձգտման մէջ՝ նոր Հայաստան կառուցելու, ինքը մենակ մնալով քուէակցիկում՝ քուէարկելու է Հանրապետական կուսակցութեան օգտին: Որովհետեւ նա անձամբ այլ ընտրանք պէտք է որ չտեսնի իրեն որպէս բանավէճի գործընկեր ապագայ խորհրդարանում: Եթէ նա դա չանի, ուրեմն՝ նա ուզում է ունենալ գրպանային ընդդիմութիւն», - ըսած է Սարգսեանը:

Վիգէն Սարգսեանի խօսքով՝ Հանրապետականը գրպանային ընդդիմութիւն չէ, Հայաստանը, ըստ անոր, այժմ Հանրապետականի կարիքն ունի: Աւելին՝ ան կը կարծէ, որ 9 դեկտեմբերին՝ ընտրութիւններու օրը, ՀՀԿ-ի օգտին պէտք է քուէարկէ նաեւ վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը:

Թէ ովքեր պիտի ըլլան Հանրապետականի միւս թեկնածուները, Սարգսեանը չէ մանրամասնած, նշելով, որ չորեքշաբթի օր ցուցակը պիտի ներկայացնեն Կեդրոնական ընտրական յանձնաժողովը: Ըստ պաշտպանութեան նախկին նախարարի, Սերժ Սարգսեանը պիտի չմասնակցի ընտրութիւններուն, սակայն, պիտի շարունակէ գլխաւորել Հանրապետական կուսակցութիւնը:

ՀԱԿ-ը Եւ «Ժառանգութիւնը» Պիտի Չմասնակցին Արտահերթ Ընտրութեան

Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած Հայ Ազգային Կոնկրէտը (ՀԱԿ) որոշում կայացուած է չմասնակցիլ Ազգային ժողովի Դեկտեմբեր 9-ի արտահերթ ընտրութեան:



տարածած հաղորդագրութեան մէջ: «Ժառանգութիւնը» էական կը համարէ, որ ընտրական յառաջիկայ գործընթացը՝ իր բովանդակալուծութեամբ եւ ընթացակարգով, ըլլայ ամբողջովին օրինական:

Նմանատիպ որոշում կայացուցած էր նաեւ Ստեփան Տեմիրճեանի Հայաստանի ժողովրդական կուսակցութիւնը (ՀԺԿ): Աւելի վաղ ընտրութիւններուն չմասնակցելու որոշումներ կայացուցած էին Հայաստանի դեմոկրատական կուսակցութիւնը (ՀԴԿ), Ազգային ժողովրդավարական միութիւնը (ԱԺՄ), Ազգային ժողովրդավարներու դաշինքը (ԱԺԴ) եւ շարք մը այլ կուսակցութիւններ:

«Այս կապակցութեամբ յոյս ենք տածել եւ ակնկալել, որ ժամանակաւոր կառավարութիւնն ու իր ղեկավարը թաշեայ լեզուափոխութեան առանց բացառութեան բոլոր յանձնառութիւններն ի կատար կ'ածէր: Այդ առանցքային յանձնառութիւններից նուազագոյն մէկը՝ նոր ընտրական օրէնսգրքի հաստատման միջոցով իրապէս ժողովրդավար ԱԺ ձեւաւորելու գրոյթը, փաստօրէն չի կատարուել», - ըսուած է «Ժառանգութեան» հաղորդագրութեան մէջ: - «Որպէս համաժողովրդական շարժման ակունքներում կանգնած ուժ՝ «Ժառանգութիւնը» կուսակցութիւնը յաջողութիւն է մաղթում մեր ժողովրդին՝ նոր Հայաստան տանող ճանապարհը ճշմարտացիօրէն որոշելու իր պատասխանատու ընտրութեան մէջ»:

ՀԱԿ-ը չմասնակցելով Երեւանի աւագանիի արտահերթ ընտրութեան, յայտարարած էր, որ այդ կերպ կ'աջակցի լեզուափոխութիւնը իրականացուցած ուժին՝ միաժամանակ պատրաստուելով լեզուափոխութեան աւարտական փուլին՝ Ազգային ժողովի արտահերթ ընտրութեան:

Ընտրութիւններուն չմասնակցելու որոշում կայացուց նաեւ Ռաֆֆի Յովհաննէսեանի գլխաւորած «Ժառանգութիւն» կուսակցութեան վարչութիւնը՝ համապարփակ քննարկումէ ետք, որոշած է չմասնակցիլ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններուն: Այս մասին ըսուած է կուսակցութեան

«Փոքր Ձեռնարկութիւնները Ազատուած Պիտի Ըլլան Բոլոր Հարկերէն» Նիկոլ Փաշինեան

«Մենք մեր գործունէութեան հիմքում դնում ենք աշխատանքի խրախուսման քաղաքականութիւնը», - Ազգային ժողովէն ներս 2019-ի պետական պիտէտէի նախագիծի քննարկման ժամանակ յայտարարած է վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը:

գործունէութիւնը կը ծաւալեն 20-ից 24 միլիոն, չեն վճարի ոչ մի հարկ: Իհարկէ որոշակի սահմանափակումներ կը լինեն՝ կապուած ոլորտների հետ, եւ կը լինի նաեւ գօտիականութեան խնդիր: Մենք այս քաղաքականութեամբ կը փորձենք խրախուսել յատկապէս մարգերում տնտեսական գործունէութիւնը», - ըսած է Փաշինեանը ընդգծելով՝ ընտրութիւններէն առաջ, օրինակ, ոչ թէ ընտրակաշառք կը բաժանեն, այլ կը բանան արժանապատիւ աշխատելու հնարաւորութիւնը:

Փաշինեանը նկատած է՝ երկրի մէջ չեն կրնար տեղի ունենալ դրական փոփոխութիւններ, եթէ այդ փոփոխութիւններու հիմքը չըլլայ անհատական ջանքը:

«Մի քրօպիզնեսի համար կը լինի հնարաւորութիւն, որ մինչեւ երեք աշխատող ունենալու պարագայում նրանց աշխատողների համար եկամտահարկի բոլորովին ուրիշ ռեժիմ գործի, այսինքն՝ նրանք ոչ թէ կը հարկուեն աշխատավարձի 23 տոկոսի չափով, ինչպէս միւսները, այլ նրանք ուղղակի 5000 դրամի հաստատագրուած վճարով կարող են լուծել եկամտահարկի խնդիրը», - ըսած է Փաշինեանը:

«Մեր քաղաքական խնդիրն է՝ իւրաքանչիւր անհատի համար ստեղծել տնտեսական գործունէութեամբ զբաղուելու իրական հնարաւորութիւն՝ թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական իրական հնարաւորութիւնների մասին է», - ըսած է Փաշինեանը:

Աշխատանքի խրախուսման խնդրէն ելլելով, ըստ Փաշինեանի, որոշած են սահմանել փոքր պիզնես, որ ազատուած կ'ըլլայ բոլոր հարկերէն:

«Այն մարդիկ, ովքեր իրենց

Հայաստան կը Բանակցի Ռուսաստանի Հետ Կազմ Գինի Նուազեցման Շուրջ

Հայաստանի կառավարութիւնը կը բանակցի Ռուսաստանի Ուժանիւթի նախարարութեան եւ «Կազմի» հետ՝ Հայաստան մատակարարուող կազմի գինը իջեցնելու ուղղութեամբ:

Ներկայիս «Կազմի» իր դուստր ձեռնարկութեան՝ «Կազմ-փրոմ Արմենիային», Հայաստանի սահմանին կազմ կը վաճառէ մէկ խորանարդ մեթրը 150 ամերիկեան տոլարով, եւ նոյն այդ կազմ ուսաստանեան մենաշնորհը, որուն կը պատկանի Հայաստանի կազմաշիւք ողջ ցանցը, բնակիչներուն կը վաճառէ գրեթէ երկու անգամ թանկ՝ այսօրուան փոխարժէքով մօտ 284 տոլարով:

«Այս պահին բանակցութիւններն ընթանում են ե՛ւ սահմանին կազմի գին ձեւաւորման եւ ներքին կառուցուածքի հետ կապուած», - գործադիրի նիստէն ետք լրագրողներու հետ ձեպագրոյցի ժամանակ յայտարարած է ուժանիւթի ենթակառուցուածքներու եւ բնական պաշարներու նախարարի պաշտօնակատար Գարեգին Բաղդամեանը: - «Բնականաբար բանակցութիւնները գնում են դէպի նուազեցման կողմը, եւ որպէսզի բանակցութեան ընթացքի վրայ որեւէ ազդեցութիւն չունենանք, ինձ թուում է մի փոքր էլ սպասէք, երբ որ կաւարտուեն բանակցութիւնները, այդ ժամանակ հանդէս կը գանք մանրամասներով»:

Հայաստան մատակարարող կազմի գինի հարցը վարչապետ Նիկոլ Փաշինեանը քննարկած էր Ռուսաստանի նախագահ Փութինի հետ՝ այս Սեպտեմբերին Մոսկուա կատարած այցի ընթացքին: Եւրասիական Տնտեսական Միութեան միւս երկիրներու՝ Ռուսաստանի եւ Ղազախստանի համեմատ կազմի գինը Հայաստանի մէջ բարձր է, ինչը մրցակցային վատ պայմաններ կը ստեղծէ հայաստանեան ընկերութիւններուն համար:

Եւրի Խաչատուրովը Վերադարձած է Հայաստան


«Մարտի 1»-ի գործով սահմանադրական կարգը տապալելու մէջ մեղադրուող ՀԱՊԿ նախկին գլխաւոր քարտուղար Եուրի Խաչատուրովը Նոյեմբեր 4-ին վերադարձած է Հայաստան: Այդ մասին «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է Խաչատուրովի փաստաբան Միհրան Պօղոսեանը:

իրականացուած: «Չիրականացնելու պատճառն այն չէր, որ ինքը Հայաստանի Հանրապետութիւնում չէր գտնուում: Նախորդող ժամանակահատուածում էլ, երբ որ Յուլիսին՝ մինչեւ մեղադրանք առաջադրելը, ծանուցագիր էին ուղարկել հարցաքննութեան հրահրելու մասին, ինքը Ռուսաստանի Դաշնութիւնից էր ներկայացել վարույթ իրականացնող մարմին: Այս պարագայում այս ընթացքում չէին ուղարկել, այսինքն՝ չէին գտել, որ անհրաժեշտութիւն կայ, չէր ներկայացել: Հայաստան վերադառնալուց յետոյ՝ դա անմիջապէս չի ենթադրուում, որ ինչ-որ խոչընդոտ է վերացել եւ ըստ դրա պէտք է գործողութիւն իրականացնել», - ըսած է փաստաբանը:

«Ամսի 4-ից է վերադարձել, այսինքն՝ երբ պաշտօնապէս որոշումը հրապարակուել է ազատման վերաբերեալ, ձեռնամուխ է եղել գործերի գործավարութեան յանձնման-ընդունմանը, ինչից յետոյ այցելել է մօր շիրմաքարին՝ Վրաստանի Հանրապետութիւնում, ամսի 4-ից գտնուում է Հայաստանի Հանրապետութիւնում: Փաստաբանի խօսքով՝ վերադառնալէ ետք Խաչատուրովի հետ քննչական գործողութիւններ չեն

ԼՈՒՐԵՐ

Հայաստան Թոյլ Չէ Տուած որ Ալիեւ Հրաւիրուի ՀԱՊԿ Գագաթնաժողովին



ՀԱՊԿ անդամ երկիրներու նախագահները Աստանայի ժողովի ընթացքին

Հաւաքական Անվտանգութեան Պայմանագիրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) անցեալ շաբաթ Ղազախստանի մայրաքաղաք Աստանայի մէջ տեղի ունեցած գագաթնաժողովին քննարկուած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը հիւրի կարգավիճակով Ասթանայի գագաթնաժողովին հրաւիրելու տարբերակը: Այս մասին կը գրէ ռուսական «Քոմերսանթ» թերթը՝ վկայակոչելով գագաթնաժողովի նախապատրաստական աշխատանքներուն մասնակցող երկու աղբիւր: Ըստ թերթի գրուցա-կիցներուն՝ նման առաջարկ եղած է Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարպաեւի կողմէն, եւ այն հաւանութեան արժանացած է միւս առաջնորդներուն կողմէ:

Աղբիւրները նշած են, որ Ալի-

եւը պատրաստ էր ներկայ գտնուելու միջոցառման, սակայն այդ գաղափարին դէմ արտայայտուած է հայկական կողմը: «Դաշինքի մէջ չմտնող պետութիւններու ղեկավարները կրնան մասնակցութիւն ունենալ ՀԱՊԿ միջոցառումներուն, եթէ անոր համաձայնութիւն տան կազմակերպութեան բոլոր անդամները», - մեկնաբանած է անդամ-երկիրներու պատուիրակութիւններէն մէկուն «Քոմերսանթ» աղբիւրը: Տուեալ պարագային, անոր խօսքով, համաձայնութիւն չէ եղած: Ալիեւի՝ Ասթանայ հրաւիրուելու մասին տեղեկատուութիւնը մեկնաբանելուն ի պատասխան՝ Հայաստանի Արտաքին գործոց նախարարութեան մամուլի խօսնակ Աննա Նաղտալեան ըսած է. «Մենք նման տեղեկատուութիւն չունենք»:

Ուրշուլա Կաչէք. «Ընտրութիւններէն Ետք Կ'եզրակացնենք՝ Հայաստանի Սեչ Ինչպիսի Փոփոխութիւններ Եղած են»

«Ինչպէս ես տեղեկացուած եմ, Դեկտեմբեր 9-ի խորհրդարանական ընտրութիւններու քարոզարշաւը պիտի տեւէ 12 օր, սակայն պիտի ըլլան նաեւ միջոցառումներ, գործողութիւններ, որոնք արդիւրեւ չեն մինչեւ այդ օրը իրականացնելը», - այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ ըսած է ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատութիւններու եւ մարդու իրաւունքներու գրասենեակի (ԺՀՄԻԳ) դիտորդական առաքելութեան ղեկավար Ուրշուլա Կաչէքը՝ պատասխանելով Panorama.am-ի հարցին, թէ որքանով քարոզարշաւի կարճ ժամանակահատուածը բաւարար է քաղաքական ուժերուն՝ իրենց տեսակէտները ներկայացնելու համար ու որքանով այն կը համապատասխանէ միջազգային չափանիշներուն:

«Միջազգային չափանիշներով կան բազում շեղումներ, թէ ինչպէս տարբեր երկիրներու մէջ կ'իրականացուին ընտրութիւնները: Օրինակ երկիր մը կրնայ ունենալ համամասնական ընտրակարգ, միւսը՝ մեծամասնական, որոշ երկիրներ կրնան ունենալ կուսակցական բաց ցուցակներ, միւսները՝ փակ: Ձեր մօտ խառն ընտրական համակարգ է: Մենք չենք ըսեր այս համակարգը լաւ է, միւսը՝ ոչ: Մեզի համար ամենակարեւոր մտահոգութիւնն այն է, որ ընտրութիւններուն մարդիկ հնարաւորութիւն ունենան իրենց ժողովրդավարական կամքը արտայայտելու», - ըսած է Ուրշուլա Կաչէքը:

Ուրշուլա Կաչէքը, պատասխանելով հարցին, թէ Հայաստանի



ԵԱՀԿ դիտորդական առաքելութեան ղեկավար Ուրշուլա Կաչէք

մէջ տեղի ունեցած յեղափոխութենէն ետք ինչպիսի սպասումներով եկած են, արդեօք ինչ-որ վերաբերմունք փոխուած է, նշած է, որ տեղեկ եւն Հայաստանի մէջ տեղի ունեցած հետաքրքիր քաղաքական զարգացումներու մասին, սակայն իրենք պիտի գնահատեն միայն այն ամէնը, ինչն ուղղակի ազդեցութիւն կրնայ ունենալ ընտրական գործընթացի վրայ: «Մենք որեւէ նախնական դիրքորոշումով չենք եկած, թէ ինչպիսին պիտի ըլլայ այս ընտրութիւնը: Յաջողորդ շաբաթներու ընթացքին մենք կը հաւաքենք փաստերը, կ'ուսումնասիրենք, որմէ ետք արդէն, որպէս ականատես, կը կարենանք եզրակացութիւններ ընել՝ արդեօք Հայաստանի մէջ փոփոխութիւն տեղի ունեցած է, բարելաւուած է այն, թէ վատացած», - ըսած է Կաչէքը:

Դաւիթ Տօնոյեան-Նախիջեւանի Ուղղութեամբ Ատրպէյճանի Ձինուած Ուժերը Ոչ Սէկ Տարածք Գրաւած են

Հայաստանի ու Ատրպէյճանի սահմանի Նախիջեւանի հատուածին Ատրպէյճանի զինուած ուժերը տարածքներ չեն գրաւած: Այս մասին 12 նոյեմբերին Պաշտպանութեան նախարարութենէն ներս լրագրողներու հետ զրոյցի ժամանակ ըսած է ՀՀ պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար Դաւիթ Տօնոյեանը:

«Նախիջեւանի ուղղութեամբ Ատրպէյճանի զինուած ուժերը ոչ մի տարածք չեն գրաւել: Դա եղել է միջդիրքային տարածութիւն, որը կրճատուել է: Ընդ որում՝ Նախիջեւանի Հանրապետութեան տարածքում, որտեղ ՀՀ զինուած ուժերը երբեք վերահսկողութիւն չեն իրականացրել», - նշած է Տօնոյեանը:

Նախարարի պաշտօնակատարի խօսքով՝ հայկական կողմը անոր հետեւանքները չէզոքացնելու համար համապատասխան գործողութիւններ իրականացուցած է:

Հարցին՝ արդեօք հայկական կողմը այդ ուղղութեամբ դիրքային բարելաւումներ ունի, նախարարը պատասխանած է՝ այո:

«Այո, եւ ոչ մէկ տեղ: Ընդ որում՝ ոչ պարտադիր ՀՀ տարածքում», - ըսած է նախարարի պաշտօնակատարը:

Հաւաքական անվտանգութեան կազմակերպութեան (ՀԱՊԿ) գլխաւոր քարտուղարի նշանակման հարցով նեղ ձեւաչափով քննարկումներ տեղի ունեցած են անդամ պետութիւններու միջեւ: Մամուլի ասուլիսի ընթացքին յայտնած է ՀՀ պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար Դաւիթ Տօնոյեանը:

«Բոլորիս խորհուրդ եմ տալիս սպասել դեկտեմբերի 6-ին:



ՀՀ պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար Դաւիթ Տօնոյեան

Քննարկումներ են եղել նեղ ֆորմատով, որոնց մասին տեղեկութիւնները հասանելի չեն: Այդ նեղ ֆորմատով որոշում է կայացուցել գլխաւոր քարտուղարի հարցին անդրադառնալ եւ այն քննարկել դեկտեմբերի 6-ին», - ըսած է Դաւիթ Տօնոյեանը: Նախարարի պաշտօնակատարը նշած է, որ ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի պաշտօնը միջազգային է եւ անոր քաղաքացիութիւնը չազդեր հայանպատ կամ հակառակ որոշումներու ընդունման վրայ: «Մենք այդ պաշտօնը զբաղեցնելու դեռեւս մօտ 1,5 տարի ունենք, բայց ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի պաշտօնը միջազգային է, եւ այն որեւէ կերպ չի ազդում հայանպատ կամ հակառակ որոշումների ընդունման վրայ՝ լինի նա Հայաստանի, թէ այլ երկրի ներկայացուցիչ», - ընդգծած է նախարարի պաշտօնակատարը:

ՀՀ ԱԳՆ-ի Պատասխանը Պելառուսիոյ Նախագահին

Հայաստանը կրնայ վերահաստատել, որ ունի բաւարար ներուժ՝ աւարտելու Հաւաքական Անվտանգութեան Պայմանագիրի Կազմակերպութեան գլխաւոր քարտուղարի պաշտօնին իր ժամկէտը: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնքրես»-ը լրագրողներու հետ հանդիպման ժամանակ այս մասին ըսած է Հայաստանի Արտաքին գործոց նախարարութեան մամուլի խօսնակ Աննա Նաղտալեանը՝ անդրադառնալով Պելառուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշէնքոյի այն յայտարարութեան, թէ պէտք է հասկնալ՝ կրնա՞յ անցումային փուլին գտնուող Հայաստանը շարունակել կրել Հաւաքական անվտանգութեան մասին Պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) գլխաւոր քարտուղարի պաշտօնը զբաղեցնելու, Եւրասիական տնտեսական միութեան (ԵԱՏՄ) մէջ նախագահութեան ծանրաբեռնուածութիւնը:

«Հայաստանը՝ որպէս երկիր, որը իր ներդրումն է ունենում կառուցի ամրապնդման գործում, լիարժէքօրէն կարող է վերահաստատել, որ ունի բաւարար ներուժ՝ աւարտելու ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի պաշտօնում իր ժամկէտը: Բայց դրանից առաջ պէտք է որոշել, թէ նորմաթիւ իրաւական առումով ինչպէս են կարգաւորուում այն հարցերը, որոնք կապուած են գլխաւոր քարտուղարի լիազօրութիւնների վաղաժամ դադարեցման հետ», - ըսած է Նաղ-

տալեանը: ՀՀ ԱԳՆ մամուլի խօսնակը արձագանգած է նաեւ հարցին, թէ ինչպէ՞ս ՀՀ-ն կ'արձագանգէ այն հանգամանքին, որ ՀԱՊԿ անդամ Պելառուսի նախագահը կազմակերպութեան գլխաւոր քարտուղարի հետ կապուած քննարկումները կը ներկայացնէ կազմակերպութեան անդամ Հանդիսացող Ատրպէյճանի ղեսպանի հետ հանդիպման:

«Հայաստանը ՀԱՊԿ-ը դիտարկում է որպէս հաւաքական անվտանգութեան օրակարգի շուրջ քննարկումների հարթակ, որը վերաբերուում է անդամ 6 պետութիւններին: Բնականաբար, այս գարգացումը ի ցոյց է դնում, որ ՀԱՊԿ շրջանակներում դեռեւս նմանօրինակ զարգացումների վերաբերեալ քննարկումների անհրաժեշտութիւն կայ: Սա ի ցոյց է դնում, որ ՀԱՊԿ-ը իր ներսում խնդիրներ ունի շտկելու: Ինչ վերաբերուում է այս իրադրութեանը, պէտք է նշեմ, որ դա, ի վերջոյ, ճիշդ չէ», - պատասխանած է Աննա Նաղտալեանը: Ան նաեւ չի շեղուցած է, որ Հայաստանը ՀԱՊԿ-ի մէջ նախագահած է 2015-2016 թուականներու եւ այդ կը համարուի Հայաստանի ամենայաջող նախագահութիւնների մէկը: Նաղտալեան ըսած է, որ սա կրնայ համարել լաւագոյն պատասխանը Հայաստանի նախագահութեան հետ կապուած բոլոր քննարկումներուն:

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը Աջակցութիւն Յայտնած է Հիմնադրամին



«Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրէն Հայկակ Արշամեանը ընդունած է Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան ատենապետը: Համբիկ Սարֆեանի հետ քննարկուած են գործակցութեան նոր հեռանկարները: Նոր Հայաստանի վերակա-

ռուցման գործին մէջ կարեւոր է համայն հայութեան ու հայկական կառույցներու համախմբուածութիւնը: Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ատենապետը վերահաստատած է աջակցութիւնը «Հայաստան» համահայկական հիմնադրամի առաքելութեանն ու նպատակներուն:

Մենք Չենք Կրնար Փոխել Պատմութիւնը

Շարունակուած է 1-էն

ուրիշներու ստրկութեան հաշուոյն»: «Այսօր մենք՝ իբրեւ այդ պատերազմի մասնակից ազգերու առաջնորդներ, առաջին հերթին պէտք է խօսինք Առաջին համաշխարհային պատերազմի դասերուն մասին:

«Երբ պետութիւն մը պատերազմ կը մղէ կամ կը փորձէ իր խնդիրները լուծել ռազմական ճանապարհով, ուրեմն ան կը հաւատայ իր ուժերուն եւ յաղթանակին: Այդուհանդերձ, Առաջին համաշխարհային պատերազմը համաճորտակային ողբերգութիւն էր այնտեղ ներգրաւուած բոլոր ժողովուրդներուն համար, եւ ի վերջոյ յանգեցուց զայն յղացած պետութիւններու քայքայման», - ըսաւ Փաշինեան:

«Եւ հակառակ մեր միասնական ջանքերուն եւ նախորդ սխալներէն սորվելու կոչերուն, այդ դասերը դիւրութեամբ կը մոռցուին: Թէեւ հարիւր տարի առաջ մարդկութիւնը հասկցաւ զանգուածային ոչնչացման զէնքը արգիլելու անհրաժեշտութիւնը, ցաւօք, ատիկա չհոշընդոտեց նոր գինատեսակներու ստեղծումը», - նշած է Հայաստանի կառավարութեան ղեկավարը, շարունակելով. «Առաջին համաշխարհային պատերազմին ընթացքին անտանտի տէրութիւնները առաջին անգամ գործածեցին «մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ յանցա-

գործութիւն» սահմանումը՝ այսպիսով դատապարտելով օսմանն ան իշխանութիւնները 1,5 միլիոն հայերու ոչնչացման համար: Յետագային այդ ահաւոր յանցագործութիւնը պէտք է կոչուէր 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւն:

«Այնուամենայնիւ, ընդամէնը քանի մը տասնամեակ անց՝ մարդկութիւնը ականատեսը եղաւ Նոլթրոսթին, Քամպոտայի, Ռուանտայի ցեղասպանութիւններուն, քրիստոնեաներու եւ եգիպտացիներու ցեղասպանութիւններուն Մերձաւոր Արեւելքի մէջ, Ռոհինյա ժողովուրդին դէմ գործադրուած բռնութիւններուն», ըսաւ Վարչապետը:

Անդրադարձ կատարելով Արցախեան հարցին Փաշինեան ցաւ յայտնեց, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի տասնամեակներ շարունակուող պայքարը՝ իր ճակատագիրը տնօրինելու համար՝ դեռ չէ ստացած պատշաճ իրաւական լուծում: 21-րդ դարուն բացարձակապէս անընդունելի է, որ ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը կիրառելու ցանկութիւնը կրնայ վերածուիլ կենսաբանական սպառնալիքի:

Ելոյթէն ետք՝ Նիկոլ Փաշինեան խորհրդանշական գիրք յանձնած է «Խաղաղութեան գրադարան»-ին՝ պատմաբան Հայկ Դէմոյեանի «Հայոց Յեղասպանութեան լուսաբանումը համաշխարհային մամուլի առաջին էջերին» պատկերազարդ գիրքը:

Ընկ. Սարաֆեանի Հանդիպումները



Շարունակուած է 1-էն

գոյն զարգացումները, Հնչակեան կուսակցութեան դիրքորոշումները, Սփիւռքի մէջ տիրող իրավիճակը եւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները:

Նոյեմբեր 11-ի երեկոյեան, Պէյրութի Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի «Արմէն եւ Բերսաբէ ձէրէճեան» սրահին մէջ տեղի ունեցած իր հրապարակային ելոյթի ընթացքին Ընկ. Սարաֆեան յայտարարեց որ, պէտք չէ կորսնցնենք մեր հայրենիքի բարգաւաճման եւ պետութեան հանդէպ վստահութեան վերականգնման այս ոսկեայ առիթը:

«Նոր Հայաստան, նոր մարտահրաւէրներ» խորագրեալ բանախօսութեան մէջ, Ընկ. Սարաֆեան ներկայացուց Հայաստանի մէջ անկախութեան օրերէն ի վեր տիրող կացութիւնը, ընկերատնտեսական անարդարութեան հիմքերը եւ այս տարի տեղի ունեցած յեղափոխութեան ծնունդ տուող պատճառները: Ան խօսեցաւ դատական համակարգի անարդարութեան եւ իշխանութեան երեք սիւներուն միջեւ անհաւասարակշռութեան մասին: Ընկ. Սարաֆեան դիտել

տուաւ, որ Հայաստան կը դիմագրաւէ բազմաթիւ ներքին եւ արտաքին մարտահրաւէրներ, սակայն վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ եւ Սփիւռքի զօրակցութեամբ պատրաստ է ուղղուելու բարգաւաճման ուղիով: Ան վերահաստատեց, որ Հնչակեան կուսակցութիւնը, ինչպէս անցեալին, այնպէս ալ այսօր եւ միշտ պիտի կանգնի հայկական պետականութեան կողքին:

Երեկոյին ներկայ էին ՀՀ հիւպատոս Լէոնարտ Ապաճեան, Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Սրբազան հօր ներկայացուցիչ Տ. Ղեւոնդ Ա. Քհնյ. Լօշխաճեան, Պէյրութի Քաղաքապետարանի անդամ, ՀԿԲՄ-ի ատենապետ Արամ Մալեան, Հ.Մ.Մ.-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Միսաք Նաճարեան, ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Վազգէն Ժամկոչեան, ինչպէս նաեւ Հնչակեան կուսակցութեան մասնաճիւղերու ներկայացուցիչներ եւ կուսակցութեան հովանաւորութիւնը վայելող միաւորներու անդամներ:

Բանախօսութենէն առաջ ծաղկեպսակ եւ ծաղիկներ գետեղուեցան Փարամազի կիսանդրիին առջեւ:

Հիւպատոս Արմէն Պայպուրթեան Այցելեց

Շարունակուած է 1-էն

Գրիգոր Խոտանեան բարի գալուստ մաղթելով շնորհաւորեց գլխաւոր հիւպատոսին իր պաշտօնի ստանձման առթիւ: Ան յայտնեց Հնչակեան կուսակցութեան զօրակցութիւնը Հայաստանի նոր իշխանութիւններուն եւ պատրաստակամութիւնը՝ Հայրենիքի հետ կապերու ամրապնդման ուղղուած Հիւպատոսութեան բոլոր նախաձեռնութիւններուն եւ ծրագիրներուն:

Պր. Պայպուրթեան շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան համար ու ներկայացուց այն հիմնական ուղղութիւնները, որոնք առաջնահերթութիւն կը հանդիսանան Հիւպատոսութեան յառաջիկայ գործունէութեան ընթացքին, ստատրեյլը համար Հայաստանի տնտեսութեան ամրապնդ-

ման եւ այդ աշխատանքներու մէջ սփիւռքահայերու ներգրաւման:

Տեղի ունեցան նաեւ այլազան ծրագիրներու մասին կարծիքներու փոխանակում:

Կուսակցութեան ներկայացուցիչներուն խնդրանքով Պր. Պայպուրթեան նաեւ ներկայացուց տարածաշրջանէն ներս տեղի ունեցող վերջին զարգացումները, յատկապէս կապուած Արցախեան հարցին, Հայ-Ռուսական եւ Հայ-Իրանական յարաբերութիւններուն: Այս առթիւ ան վստահեցուց որ Հայաստանի իշխանութիւններուն եւ Արտաքին Գործոց նախարարութեան վարած քաղաքականութիւնը, այս երեք ուղղութիւններով, շատ աւելի յստակ են քան անցեալին եւ ազդեցիկ պետութիւններն ու միջազգային կառույցները ըմբռնումով կը մօտենան Հայաստանի դիրքորոշումներուն:

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC


MEMBER

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepyan@gmail.com

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Հայաստանի Հանրապետության Կառավարության Երախտագիտության Նուերը Նորուեկիայի Թագաւորութեանը



Նոյեմբերի 6-ին սփիւռքի նախարարութիւնում նախարարի պաշտօնակատար Մխիթար Հայրապետեանը Հայաստանի Հանրապետութիւնում Նորուեկիայի Թագաւորութեան պատուաւոր հիւպատոս Թիմոթի Տէյլիտ Սթրեյթին յանձնեց ՀՀ կառավարութեան նուէրը՝ Նորուեկիայի Թագաւորութեանը՝ սփիւռքահայ Դանիէլ Վարուժան Հեճինեանի հեղինակած Ֆրիտյոֆ Նանսենի դիմանկարը:

ները սնուցող առաջին ամենամեծ աղբիւրը», - շեշտեց նախարարի պաշտօնակատարը:

Մխիթար Հայրապետեանը խօսեց նաեւ 1988թ. երկրաշարժից յետոյ աղէտի գոտու վերականգնման

գործընթացում Նորուեկիայի Շար.ը էջ 19

ՀՀ կառավարութեան եւ մասնաւորապէս սփիւռքի նախարարութեան անունից ջերմօրէն ողջունելով հիւրերին՝ սփիւռքի նախարարի պաշտօնակատար Մխիթար Հայրապետեանը նշեց. «Այսօրուայ միջոցառումն ունի խորհրդանշական բնոյթ. մենք սփիւռքի նախարարութիւն ենք հրաւիրել Հայաստանի Հանրապետութիւնում Նորվեգիայի Թագաւորութեան պատուաւոր հիւպատոսին՝ մի մարդու, ում երկիրն ու ժողովուրդը ողջ հայութեան մօտ ասոցացում են որպէս բարեկամ, եւ ցանկանում ենք նրա միջոցով Նորվեգիայի Թագաւորութեան կառավարութեանը փոխանցել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմից փոքր, սակայն մեծ ջերմութիւն, բարեկամութիւն եւ երախտագիտութիւն արտայայտող նուէր: Հայ-նորուեկական բարեկամութեան ակունքներում են կանգնած մասնաւորապէս հայ ժողովրդի՝ նորուեկացի մեծ բարեկամ, բեւեռախոյզ, գիտնական, ականաւոր հումանիտար Ֆրիտյոֆ Նանսենը եւ միսիոներ Բողիլ Կատարինա Բիորնը, ովքեր նախորդ դարասկզբին մեծ աջակցութիւն են ցուցաբերել հայ ժողովրդին»:

Մխիթար Հայրապետեանն ընդգծեց՝ Նանսենն առաջիններից էր, որ դատապարտեց Հայոց ցեղասպանութիւնը, եւ հենց նրա միջոցով տասնեակ հազարաւոր հայ գաղթականներ կարողացան ցեղասպանութիւնից փրկուել եւ ապաստան գտնել Հայաստանում եւ այլ երկրներում, իսկ Բողիլ-Կատարինա Բիորնը Յեղասպանութեան տարիներին որպէս բուժաշխատող Արեւմտեան Հայաստանում փրկեց հազարաւոր անտուն ու հիւանդ հայ երեխաների: «Հայ ժողովրդի համար Ֆրիտյոֆ Նանսենն ու Բողիլ-Կատարինա Բիորնը խորհրդանշում են Նորուեկիան ու նորուեկացու մեծահոգութիւնը, ինչպէս նաեւ մարդկային բարեփոխութիւնն ու նուիրուածութիւնը մարդու եւ ազգերի իրաւունքների պաշտպանութեանը, եւ հենց նրանք են հանդիսանում մեր երկրների ու ժողովուրդների յարաբերութիւն-



ARMENIAN COUNCIL OF AMERICA
Legal Aid

SATURDAY NOVEMBER

17, 2018

2-5PM

NORTH VALLEY CITY HALL,
7747 FOOTHILL BLVD, TUNJUNGA, CA

- ISSUES:
- EMPLOYMENT
 - LANDLORD/TENANT
 - BANKRUPTCY
 - CRIMINAL
 - IMMIGRATION
 - DIVORCE
 - CUSTODY AND CHILD SUPPORT
 - PERSONAL INJURY
 - BUSINESSES AND CONTRACTS

THE CLINIC IS OPEN TO ALL REGARDLESS OF THEIR IMMIGRATION STATUS

HELP IS AVAILABLE IN ENGLISH, ARMENIAN, AND SPANISH

ALL CONSULTATIONS WILL BE ON A FIRST COME FIRST SERVE BASIS ON ISSUES

THE ARMENIAN COUNCIL OF AMERICA LEGAL AID INITIATIVE STRIVES TO ADVOCATE FOR THE RIGHTS OF THE UNDER-SERVED AND PROVIDES ACCESS TO THE LAW. THOUSANDS ARE UN-AWARE OF THE OPPORTUNITIES FOR ADEQUATE LEGAL ASSISTANCE. OUR ATTORNEY VOLUNTEERS WORK WITH OUR LEGAL AID PARTNERS TO BETTER SERVE OUR VIBRANT AND DIVERSE COMMUNITY.



MONICA RODRIGUEZ
L.A. CITY COUNCILWOMAN



Kathryn BARGER
5th District Supervisor • County of Los Angeles

QUESTIONS? CONTACT LEGALAID@ARMENIANCOUNCIL.ORG

Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբի 40-Ամեակի Բացառիկ Համերգը



Գեղարուեստական ինքնուրույն եւ բացառիկ համերգի մը ներկայ եղաւ լուսանկարասի հայ երաժշտասէր խումբերամ հասարակութիւն մը Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, Ուրբաթ 9 Նոյեմբեր 2018:

Արդարեւ Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբի հիմնադրութեան 40-ամեակը նշելու եկած էին Արեւմտեան Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրապետան նախկին առաջնորդ Գեր. Վաչէ Արք. Յովսէփեան, Հայաստանի Գուգարաց Թեմի առաջնորդ Գեր. Սեպուհ Արք. Չուլճեան, Թեմական վարչութեան ատենապետ Ժողէֆ Կանիմեան, պոլսահայ երգահան Մաթակ Թօշիկեան եւ խումբերամ բազմութիւն մը:

Ներկաներուն բաժնուած յայտագիր գրքոյկին մէջ հակիրճ ծանօթագրութիւններով ամփոփուած էին իր երաժշտական կալուածին մէջ 40 տարիներու ծաւալած Խաչատուրեան Դպրաց Դաս երգչախումբի հայրենանուէր եւ եկեղեցանուէր հարուստ գործունէութիւնը, ինչպէս նաեւ օրուան յայտագրի մասնակիցներու ամփոփ կենսագրութիւնը:

40-ամեակի կազմակերպիչ յանձնախումբի անունով Լիւսի Թաշճեան, իր բացման խօսքին մէջ սեղմ գիծերու մէջ դրուատեց Խաչատուրեան Դպրաց Դաս երգչախումբի անցնող տասնամեակներու փառալուստ ուղին եւ ապա շնորհակալական ջերմ խօսքերով ողջունեց ներկաները, իրենց անվերապահ աջակցութեան համար:

Յատուկ այդ երեկոյին համար գերարդիական սարքաւորումներով (ձայն-լուսաւորում եւ բեմահար-

թակ) օժտուած բեմին վրայ երկսեռ երգչախումբը դեկավարութեամբ Ստեփան Կէօզիւմեանի սկսաւ իր յայտագրին: Առաջին անգամ ըլլալով երգուեցաւ Խաչատուրեան Երգչախումբի քայլերգը (խօսք Վարդան Քհնյ. Տիւրկիւրեանի): Այնուհետեւ գերծաղրուեցաւ գեղարուեստական ինքնուրույն յայտագիր մը, սկսելով «Տեսնեմ Անին» հանրածանօթ երգէն: Նշենք նաեւ որ համերգի գրեթէ բոլոր կատարումներն ալ յօրինումներն էին պոլսահայ ժամանակակից տաղանդաւոր երգահան Մաթակ Թօշիկեանի: Համերգին ընկերակցող նուագախումբի գեղարուեստական դեկավարն էր երգահան Արտաշէս Գարթալեան:

Շուրջ 15 կատարումներէ բաղկացած երգերուն մէջ ներառուած բառերու հեղինակներէն ոմանք պոլսահայեր էին (Սուլթիաս Գումրուեան, Մաքրուհի Յակոբեան, Իգնաս Սարըասլան...): Երեւոյթ մը արդարեւ որ ինքնին խրախուսանք մըն է պոլսահայ մշակոյթի գործիչներու համար...: Տպաւորիչ էին Մաթակ Թօշիկեանի յօրինումներէն «Երեւան»ը (մեներգ Մանիկ Մանուկեան), «Նամակ»ը (մեներգ Ռաֆֆի Գերպայպեան), «Մեր Լեզուն», «Աւետեաց Երկիր» (մեներգ Ալենուշ Եղնազար), բարձր գնահատանքի արժանացաւ «Սէր»ը (խօսք Մաքրուհի Յակոբեանի մեներգիչներ Մանիկ Մանուկեան եւ Ռաֆֆի Գերպայպեան):

Ներկաներուն համար հաճելի անակնկալ մըն էր ունկնդրել նաեւ Մաթակ Թօշիկեանի յօրինած «Դարէ Դար Աղթամար» օրաթօրիոյն երեք հատուածներ (խօսք Իգնաս Սարըասլանի): Այս վերջինն իրապէս կոթողային գործ մըն էր,

որուն համար կ'արժէ առանձին համերգ մը սարքել երաժշտասէր հասարակութեան համար: Արդարեւ նման օրաթօրիոններ շատ հազուադէպ երեւոյթներ չղած են սփիւռքի հայ երգահաններու կողմէ (Օննիկ Պէրպէրեան, Սիրվարդ Գարամանուկ, Համբարձում Պէրպէրեան), իսկ վերջին տասնամեակներուն հայրենի տաղանդաւոր երգահան Հենրիկ Անասեան:

Համերգի աւարտին 40 ամեակի յանձնախումբի ատենապետ Սիմոն Աճըրիւածողուն շնորհակալութիւն յայտնեց յայտագրի մաս կազմող բոլոր արուեստագէտներուն որոնք ծաղկեփունջերով ու որոտընդոտ ծափերով ողջունուեցան ներկաներուն կողմէ:

Իր փակման խօսքին մէջ առաջնորդ Յովնան Սրբազան ի մէջ աչլոց ըսաւ. «...Այս երեկոյթով պահ մը փոխադրուեցանք Հայաստան: Խաչատուրեան Դպրաց

ու պատիւը: Ամեակները մեր կեանքին մէջ հանգրուաններ են նոր թափով շարունակելու մեր գործը»: Սրբազանը առանձնապէս չիշեց նախկին առաջնորդ Վաչէ Արք.ի անունը, որուն քաջալերութեամբ հիմնուած էր այս երգչախումբը: Ան մէկ առ մէկ չիշատակեց նաեւ յայտագրի առաւել ճոխացման համար իրենց մասնակցութիւնը բերած տաղանդաւոր արուեստագէտներուն անունները, գլխաւորութեամբ վաստակաշատ խմբավար Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի:

... էս ի՞նչ արեցիր եղբայր պատուական, քո արածը քո դուրն եկա՞ւ ... 60 տարուայ ընկերջող, հարազատ դարձած մարդուն կարելի՞ է այսպէս մենակ թողնել: Լա՞ւ, հասկացանք, ես մի կերպ կը ներեմ քեզ, բա միւսները, հարիւրներն ու հազարները, որոնք կարօտ են մնալու քո՝ մանկան միամտութեամբ եւ պարզութեամբ արտայայտուող մտքերին, քո կատարումներին, քո խմբավարութեանը եւ, եւ, իհարկէ՛, քո հոմերական ծիծաղին: Արդեօ՞ք դու Հոմերոսի աստուածների միջեւ անցկացուող ծիծաղի մրցումներին ես մասնակցել...: Այսինքն՝ հնարաւոր է, այդպէս էլ պիտի լինէր, որովհետեւ ամբողջ կեանքիդ ընթացքին, 60 տարի անընդմէջ ծառայեցիր Աստուծոյ տանը՝ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ:

Այնքան մտերմացար Աստուծոյ հետ, որ մահուան անկողնում չթողեցիր բժիշկներին անորոշ ժամանակով երկարացնել երկրային կեանքդ եւ՝ զարմանալի, միանգամայն թարմ ուղեղով, շուրջիններիդ համար լսելի ձայնով ասացիր՝ «Թողէք, թողէք ես գնամ, Աստուած ինձ կանչում է...»: Եւ այդ ամէնը ժպիտով: Եթէ ուժդ ներէր, վստահ եմ, քեզից անպակաս հոմերական ծիծաղով ոտք կը դնէիր յաւերժութեան արահետին: Ինչո՞ւ արահետ եւ ոչ ճանապարհ, - որովհետեւ եզակի հողածիններին է Աստուած իր գիրկին առնում, իսկ դու այդ եզակիներից ես սիրելի Լեւոն:

- Ի՞նչ մասնորոշ, - կ'ասէր համբաւաւոր երգչուհի Ալլա Պուզաշովան, դու դահլիճի 8-րդ կարգում չնստեցիր, քո տեղը բեմին էր, դաշնամուրի, երգչո՞ւնի եւ դիրիժորական վահանակի առջեւ: Իհարկէ, եղան օրեր, որ դու որպէս ունկնդիր նստեցիր առջեւի շարքում, որպէսզի լսես քո շնորհալի աշակերտների եւ ուսանողների կատարումները: Հիմա ի՞նչ են անելու նրանք, հապա երգիչ-երգչուհիները: Ի՞նչ ենք անելու մենք՝ Սիփան երգչախմբի անդամներս, Քալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան անդամները: Վերջերս դու թողեցիր եկեղեցին, որին ծառայեցիր ճիշդ եւ ճիշդ 60 տարի:

Քո աշակերտներն ու ուսանողները բառիս բուն իմաստով որբացան: Քո կենսախիղճը բնաւորութեամբ, սրտածո մտեցումով նրանց համար եղար հայր, պապիկ: Կոտորուեց Սիփան երգչախմբի ողնաշարը, մի խումբ, որի 40-ամեայ գոյութեան աւելի քան երեսուն տարուայ յաջողութիւնների աւելծի

բաժինը քո անուան հետ է կապուած իմ սիրելի կրտսէր եղբայր: Մշտապէս խոնարհ, մշտապէս հաճոյակատար, մշտապէս տառացիօրէն անշահախնդիր, առանց ակնկալութեան մինչեւ երկրային կեանքիդ աւարտը կրեցիր քեզ բաժին ընկած խաչը: Այս երկար տարիների ընթացքում չեղաւ մի դէպք, որ մենք իրար չհասկանանք եւ կամ էլ մի թթու խօսք ասենք իրար: Մշտապէս փոխադարձ հակացողութեամբ մէկու միւսին լսելով, յանուն հայ մշակույթի պահպանման ջանացինք անկարելի կարելի դարձնել: Մենք երկուսով ընտանիքի վերածեցինք Սիփան երգչախումբը, որի անդամները թեւաթափ եղած, ահա մէկ շաբաթ է գիշեր ու գոր հեռաձայնում են՝ իրենց ցաւակցութիւնները յայտնելու: Անդամներից մէկին էլ հարցնում է՝ «Բա ի՞նչ ենք անելու մահտար, չէ՞ որ շուտով փորձերն ենք սկսելու մեր երգչախմբի 40-ամեայ յոբելեանի ծրագրի վրայ աշխատելու համար»: Ասա՛... ասա Լեւոն ջան, ի՞նչ պատասխան տամ, ես էլ եմ թեւաթափ եղել: Պատասխան չունեմ բարեկամս: Ասում են անփոխարինելի մարդ չկայ: Քո կորստի փաստի հետ համահունչ չէ այդ ասացուածքը: Դժուար, չասելու համար անհնարին է լինելու առանց քեզ աշխատելը:

Ընդամէնը երկու-երեք տարի է որ, դարձեալ անշահախնդրօրէն, յանուն մեր բարեկամութեան, ձեռք մեկնեցիր Քալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան ձեռնարկները շինացնելու համար: Գրողներն այնքան արագօրէն կապուեցին քեզ հետ, այնքան սիրեցին քեզ, որ այլեւս չեն պատկերացնում որեւէ ձեռնարկ առանց քո ներկայութեան: Լաւ էր, որ 3-4 ամիս առաջ յատուկ խնջոյք կազմակերպեցինք քո պատուին: Սա էլ թող դիտուի որպէս վշտոտ հոգու մխիթարանք:

Որպէս տաղանդաւոր դաշնակահար-երգչո՞ւնահար աշխատել ես մի քանի տասնեակ երգիչ-երգչուհիների հետ: Համբաւաւոր երգչուհի Գոհար Գասպարեանը մշտապէս աշխատում էր քեզ հետ: Խորհրդային ստուերոտ տարիներին երբ թուշունն անգամ չէր կարող հատել սահմանը, քեզ թոյլ տուին նրա հետ համերգների գնալ քո ծննդավայրը՝ Եգիպտոս եւ այլ երկրներ: Այստեղ, Լոս Անճելըսում, դու իսկական գանձ էիր մեր իրաւ երգիչ-երգչուհիների համար: Քո բացակայութիւնը երկար տարիներ զգալի կը լինի նրանց համար:

Քո ծառայութիւնը հայ

Մայրիկ



Հացպանեաններու ընտանիքը 1970-ական տարեթիւերուն իրենց Իսքենտերունի բնակարանին մէջ: Չախէն աջ առաջին կարգը՝ Դոնիսիմէ մեծ մայրիկը, Խանըմ Էքմէքճի եւ Յակոբ Քրոսա: Ետեւի կարգը՝ Մարիամ (Գեորգի հորաքոյրը), Մարգիս Հացպանեան, Մարիամ Հացպանեան եւ Գեորգ

ՈՒԿԸՓ ԶՈՐԱՔՕԼՈՒ

Ամենադժուար ժամանակներուն մայրիկը սիւնն է օժախին: Դիմադրութեան խորհրդանիշն է: Փլազա Տէլ Մայրիկ մայրերը, Շաբաթօրեայ մայրերը, Խաղաղութեան մայրերը այդ շարքեր են: Ապա կը լինէմ Մաքսիմ Կորբիի սրբադասած մօր կերպարը, Փէօրլ Պաքիի 1920-ականներուն Չինաստանը պատմած «Մայրը» վէպը: Մի այլ օրինակ է Քրանսահայ բեմադրիչ Անրի Վերնէյի հրաշալի գործը «Մայրիկը»: Յեղասպանութենէն մազապուրծ փրկուած հայ ընտանիքի մը Ֆրանսայի մէջ վերապրելու փորձը կը պատմէր: Անցեալին շատ ուզած էի այդ գիրքը թարգմանելու հրատարակել, չյաջողեցայ, յուսամ մէկը ի վերջոյ կ'ընէ այդ բանը: Ապա ֆիլմ նկարահանեց այդ գիրքի վրայ Քրիստիո Քարտինալու Օմար Շէրիֆ բաժնած էին գլխաւոր դերերը: Վերնոյ մրցանակներու արժանացաւ այդ ֆիլմի շնորհիւ:

Վերջերս կորուստը ապրեցանք Մարիամ մայրիկին՝ Մարիամ Հացպանեանին: Ան այլ ցեղասպանութեան արհաւիրքը ապրած ընտանիքի մը մայրութիւնը ըրաւ: Յաջողեցաւ ամենադժուար գործերէն մէկը կատարեց՝ ընտանիքի միանալու թիւնը պահել Ատրեամանի դժուար պայմաններուն մէջ: Իսկ 6-7 Սեպտեմբերի դէպքերուն արհաւիրքը հասաւ հոն ալ, հաւաքեց ընտանիքը եւ բնակութիւն հաստատեց այս անգամ Իսթեմբուլում, Ալեքսանտրէթ: Ամուսինը Գէորգ կատարեալ ընկեր մըն էր իրեն համար, որուն հետ միասնաբար բաժնեցին կեանքի դժուարութիւնները: Գէորգ եւս դիմադրող ոքիով անարդարութեան դէմ ըմբոստացող խիզախ անձնաւորութիւն մըն էր: Թուրքիոյ բանուորական կուսակցութեան հիմնադրութիւնով ոգեւորուած, յուսադրուած էր եւ այդ ոգեւորութեամբ փարած կուսակցութեան Ալեքսանտրէթի մասնաճիւղի հիմնադրութեան: Այս քաղաքը արդէն միշտ ունեցած էր ձախակողմեան հակումներու

նկատմամբ գերզգայուն դիմագիծ մը: Այդ ժամանակ մեծ պայքար տարած էր քաղաքի հայոց գերեզմանատան գրաւումի ջանքերուն դէմ: Յանձն առած էր ամէն տեսակ դժուարութեան դէմ պայքարիլ գերեզմանատունը պահպանելու համար: Հապա ապրեցանք 1970-ական տարեթիւերուն քաղաքացիական պայքարի միջավայրը: Այդ օրերուն ֆաշիստներուն գլխաւոր թիրախը դարձած էր Գէորգ էքմէքճի (Հացպանեանը):

Որդիներն ալ նոյն դիմադրութեան մասնակիցները եղան: Չէ որ պտուղը ծառէն հեռու պիտի չի յնար: Վերջապէս 1980-ի գինուորական լեղափոխութեան անմիջապէս նախօրեակին յաջողեցաւ Սաթենիկն ու Սարգիսը Եւրոպա աւելի ապահով պայմաններուն տիրած ափերը դրկել: Որդիները դրկեց, բայց ինք բաւական ծանր հալածանքներու ենթարկուեցաւ նաեւ իր ազգանունի հարկը լուծելու համար: Վերջապէս երկարատեւ պայքարէն ետք Գէորգ եւ Մարիամ եւս յաջողեցան մէկտեղուիլ իրենց դստեր հետ:

2010-ին երբ Գէորգ մահացաւ կրտսեր որդին Սարգիս բանտարկուած էր Երեւանի մէջ: Չէին կրցած իրար հանդիպիլ: Գէորգ որդուց կարօտը սրտին հեռացաւ այս աշխարհէն: Սոյն տարուայ Մայիսին այդ անողոք հիւանդութիւնը Սարգիսն ալ խլեց մեր ձեռքերէն եւ վեց ամիս անց, այս անգամ Սամաթիոյ Սուրբ Գէորգ եկեղեցիէն հրաժեշտ կու տանք Մարիամ մայրիկը: Հայր եւ որդի Սարգիսն ու Գէորգը հիմա պիտի կրնային իրենց կարօտը յագեցնել: Մահուան գոյժը ստացայ ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան Պաքըրգիւղի մասնաճիւղի կայքէջէն:

Կ'ըմբոստանամ որ Սարգիսը չարժանացաւ Երեւանը ալեկոծող այդ հոյակապ լեղափոխութեան ուրախութիւնը վայելելու: Մինչդեռ ինք որքան մեծ նպաստ պիտի ունենար իր իսկ տան մէջ ժողովրդավարական կարգերու հաստատման գործին:

«ԱԿՕՍ»

www.massispost.com
Daily News Updates

Մշակույթի Տօնը Մերտիմեան Վարժարանի մէջ

Կեանք կը բուրեցնէ Վերա-գարթնում ու յաղթանակ կը բուրեցնէ Ուր որ ըլլան հողմացրիւ ուր որ գաղթեն՝ Վարդապետ Քու տառերդ ազատութիւն կը բուրեցնէ: ՉԱՐՐԱՍ



Հայ տառերու գիւտով Մերոպ Մաշտոց հայութեան տուաւ հոգեմտաւոր մշակույթի զարգացման եւ արժէքներու պահպանման երաշխիքը ու այսօր ստոյգ, կամայ թէ ակամայ հողմացրիւ դարձած հայերս անոր ապաւինած, մենք մեր փոքրիկ Հայաստանը կը կերտենք հայրենիքէն մղոններով հեռու ու մեր հայու ինքնութիւնը կը պահենք նոր սերունդին փոխանցելով մեր մշակութային գանձերը, որոնք հիմքն են մեր գոյութեան ու երաշխաւորողը մեր գալիքին:

Մերտիմեանի ու Լոս Անճելոսի տասնեակ մը այլ հայկական վարժարաններու մէջ «Մշակութային Ամիս»ը արդէն իսկ, իր աւարտին հասած է: Մերտիմեան վարժարանը իր տնօրէնութեամբ, Ծնողա-Ուսուցչական, աշակերտա-

կան կազմերով ամիս մը ամբողջ, հանդէս եկաւ ու փառաբանեց հայ մշակույթը, տարբեր նախաձեռնութիւններով ինչպէս նաեւ Հոկտեմբեր 22-26 հայ գիրքերու, իրերու եւ յուշանուէրներու վաճառք կազմակերպելով:

Հոկտեմբեր 15ին, Մերտիմեան վարժարանի տնօրէնութիւնը, ուսուցչական կազմն ու պաշտօնէութիւնը ունեցան իրենց Մշակույթի Օրուան ճաշը, սեղանին գլխաւոր զարդն էր նուշով, մեղրով, չամիչով հագեցած՝ Ղափաման:

Հոկտեմբեր 25ի յետմիջօրէին, դասաւանդութիւնները կանգ առին եւ աշակերտները դասարան առ դասարան իրենց ծնողներուն հետ վարժարանիս շրջափակէն ներս համտեսեցին Ծնողա-Ուսուցչական մարմնին կողմէ հրամցուած

Տօնը Շնորհաւոր «Վարդապոյն Քաղաք» Ս. Գրիգոր Լուսաւորիչ Շաբաթօրեայ Վարժարանը Տօնեց Երեւանի 2800ամեակը



3 Նոյեմբեր 2018, Շաբաթ օր, Փաստենա քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանը աշակերտական յատուկ ժամանակով տօնեց Երեւանի հիմնադրութեան 2800ամեակը: Վարժարանի աշակերտները նախ Երեւանի հին ու նոր լուսանկարներով պատրաստուած ցուցադրութիւն մը դիտեցին: Սահող նկարներուն հետ՝ աշակերտները լսեցին մայրաքաղաքի պատմութեան վերաբերեալ շահեկան գիտելիքներ, ներառեալ անոր «մականունը»՝ «Վարդապոյն քաղաք»: Յուշագրութիւնը անուանուած էր «Յետադարձ ակնարկ»: Ան աշակերտներուն ցոյց տուաւ, թէ Երեւանի բերդը, հիմնական պողոտաները, երեւելի շէնքերը, յուշարձանները եւ հրապարակները ինչպէս են այսօր եւ ինչպէս էին 50, 70 եւ 100 տարի առաջ: (Հանդէսին ներկայ գտնուող կարգ մը ծնողներուն համար

զարմանալի չէր տեսնել, թէ հին լուսանկարներու մէջ Մայր Հայաստանի յուշարձանի պատուանդանին վրայ կը տեսնուէր Սթալինի, Հանրապետութեան հրապարակին վրայ՝ Լենինի, իսկ Շուր Ազնաւուրի հրապարակի վրայ՝ Նազատուր Աբովեանի արձանը:) Աշակերտները, որոնք դասարաններէն ներս մայրաքաղաքին նուիրուած երգերուն եւ բանաստեղծութիւններուն ծանօթացած էին, կուռ ձայնով երգեցին քաղաքի քայլերգը՝ «Էրեբունի-Երեւան»ը եւ Արմէն Մանդակունեանի «Երեւան, Երեւան» երգը: Մանկապարտէզի աշակերտուհիներէն, 7ամեայ փոքրիկ Օտէթը արտասանեց հայրենասիրական գողտրիկ ոտանաւոր մը: Վերջաւորութեան, Երեւանն ալ արժանապէս ունեցաւ իր կարկանդակը, որուն վրայ պատկերուած էր մայրաքաղաքի



հայկական խորովածը եւ անուշեղէնները:

Օրուան եզրափակիչ ձեռնարկը՝ Մանկապարտէզի-Ե. կարգի աշակերտներուն հրամցուած գեղարուեստական յայտագիրն էր, որուն հիւրերն էին վարժարանս այցելող Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Բարեշնորհ Տէր Յովնան Արք. Տէրտէրեանը, Տէր Սերովբէ Ալանճեանի ընկերակցութեամբ, վարժարանիս հիմնադիրներէն, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան գործադիր տնօրէն՝ Տիար Զաւէն Խանճեան եւ Վերապատուելի՝ Սերոբ Մկրտիչեան, որոնք իրենց ներկայութեամբ եկան յիշեցնելու, թէ հայ եկեղեցուց Թարգմանիչներն էին, որ հիմքը դրին հայ դպրութեան ու անոնց ջանքերով մեր ազգը համախմբուեցաւ ու գոյատեւեց հակառակ դիմագրաւած արհաւիրքներուն:

Յայտագիրը բացուեցաւ Տիկին Լինա Արսլանեանի բարի գալուստի խօսքերով եւ Վերապատուելի՝ Սերոբ Մկրտիչեանի աղօթքով: Աշակերտները իրենց արտասանութիւններով, փոքրիկ ներկայացումներով, երգերով ու խանդավառութիւն հրահրող պարով ելոյթ ունեցան փոխ ի փոխ եւ աւարտեցին Երեւան-

Էրեբունի երգով:

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան գործադիր տնօրէն՝ Պրն. Զաւէն Խանճեան խօսք առնելով բաւ. «Նկատեցի շատերդ «Դուխով» շապիկներ հագած էք այսօր, այդպէս ամէն առաւօտ «Դուխով» եկէք դպրոց սովորելու»: Ապա ան անդրադարձաւ դպրոցի բարերարներ՝ Օրիորդներ Շարլոթ եւ Էլիզ Մերտիմեաններուն, որոնք իրենց կեանքի խնայողութիւնը նուիրաբերած են վարժարանիս հիմնադրութեան գործին: Անտարակոյս պէտք է յիշել նաեւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան բարենպաստ դերին մասին:

Տիկին Արսլանեան իր շնորհակալութեան խօսքերը ուղղեց Հայերէնի Բաժանմունքի ուսուցիչներուն, գրադարանի պատասխանատուին եւ Ծնողա-Ուսուցչական մարմնին եւ յորդորեց աշակերտները հաւատարիմ մնալու հայ աշակերտի ուխտին: Ապա ան հրաւիրեց առաջնորդ հայրը, որ իր պատգամով ու օրհնութեան աղօթքով եզրափակէ յայտագիրը: Առաջնորդ հայրը փոխանցել է տք իր պատգամը, աշակերտներուն ուխտել տուաւ տէր կանգնել մեր մշակութային աւանդներուն ու հայօրէն ապրել:



յատակագիրը՝ Արարատի եռաչափ կերտուած քի շուքին տակ:

Կը շնորհակարտեմք մեր սիրուն մայրաքաղաքի ծնունդը եւ կը մաղթենք, ինչ որ երգահան Մանդակունեանը մաղթած էր. «Եւ ես ունեմ մի մեծ երազ, որ մնայ ջինջ երկինքը քո- Երեւան Երեւան, դու ապրիր յաւիտեան»:

Շաբաթօրեայ վարժարանի աշակերտութեան յաջորդ ծրագիրներն են Համահայկական Հիմնադրամի դրամահաւաքին մասնակցել ու սահմանապահ գինուորներուն նոր տարուայ բարեմաղթութիւններու նամակներ գրել եւ զանոնք Արցախ հասցնել:

APPLY TODAY!

NOW ACCEPTING APPLICATIONS FOR SUMMER 2019

Learn more about the Armenian Assembly of America's Summer Internship Programs in Washington, D.C. & Yerevan, Armenia at www.armenian-assembly.org/students

TOP: U.S. SENATOR ED MARKEY (D-MA)
BOTTOM: ARMENIAN PRESIDENT ARMEN SARKISSIAN

Վաստակաւոր Երաժշտագէտ Խմբավար Արսէն Սայեանի Յիշատակին (1929-2018)

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ամերիկահայ համայնքն ու Հայաստանեայց Եկեղեցին մեծ կորուստ մը եւս արձանագրեցին անցնող շաբաթներուն Հոկտեմբեր 5-ի անակնկալ մահուամբ վաստակաւոր երաժիշտ Արսէն Սայեանի որուն մահուան գոյժը Ուաշինկթընէն ուղղակի հասաւ մեզի, երէցկնոջ եւ ինծի, իր ազնիւ տիկնոջ Գեթրիին ուղարկած կարճ գրուած թէքնէն: Հանգուցեալը եղաւ իմ մօտիկ գործակիցը անցնող յիսուկէ աւելի տարիներուն յատկապէս Ֆիլատելֆիոյ մէջ ուր հիմնած էր արդիւնալից եւ երկարատե Գնար երգչախումբը որուն մէկ գործօն անդամն էր երէցկին ձոյսը, ուր նաեւ ես պաշտօնավարեցի ուղիղ 20 տարիներ:



Ներկայացման համար: Հոն էին Տ. եւ Տիկ. Արսէն Սայեաններ իրենց վաղեմի բարեկամին ընծայուած բարեպատեհ այդ առիթով:

Երբ 1949 թուին առաջին անգամ պատանի տարիքիս մուտք կը գործէի Անթիլիասի Դպրեվանքէն ներս որպէս Գ կարգի ժառանգաւոր սան, Արսէն արդէն Ընծայարանէն շրջանաւարտ եղած էր նոյն տարին ու մեկնած իր ծննդավայրը Հալէպ ուր ուսուցչու թեամբ փայլեցաւ, հիմնելով իր առաջին «Շողական» անուն երգչախումբը, մինչեւ այն տարիներուն երբ մասնագիտացաւ ու վկայուեցաւ Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցէն որպէս խմբավար երաժշտագէտ, յանձնելով իր աւարտաճառը «Միջնադարեան Հայ Երաժշտութիւնը» նիւթին շուրջ: Տոկուն նկարագրի տէր եւ հայ մշակութի հանդէպ անսակարկ սէր եւ գուրգուրանք տածող անձ մը եղաւ ան, եւ մեր վկայութեամբ կը գրենք սոցի տողերը յատնելու համար որ Արսէն Սայեան ոչ միայն երաժշտութեան յառաջապահ գիտնորը եղաւ, այլ նաեւ դաստիարակ մը, քանզի երբ երգ կը սորվեցնէր կուտար նաեւ երգին յարակից ազգային եւ մշակութային թաքուն արժէքները ամերիկահայ երիտասարդ սերունդին: Այդ սերունդը շատ բան կը պարտի իրեն:

Ազնիւ բնաւորութեան տէր պատուական հայորդի Մաեսթրօ Արսէն Սայեան չափազանց բծախնդիր, կոկիկ, ժպտադէմ եւ հրապուրիչ այն անձն էր որուն հետ ամէն անձ կրնար որքան յարգանքով յարաբերիլ նոյնքան նաեւ պարգուութեամբ ըմբոշխնել իր ձայնն ու երգը: Խստապահանջութեամբ կ'ուսուցանէր գերազանցօրէն ազնիւ եւ անպայման մնայուն եւ խօսուն ժպտող դէմքին, իր համեմատութեամբ եւ գիտութեամբ իր բարձրագոյն ճիւղի ի գործ դնելով գանոնք կը բաշխէր ամենուրեք, անխոնջ եւ անկեղծ իր գործընթացը միշտ ուղիղ եւ անկողմնակալ պահելով, եւ ամենէն բարձր արժանիքը յարգելով որ էր առանց որեւէ ակնկալութեան:

Կանուխէն 1957-ին Միացեալ Նահանգներ գաղթեց, կազմեց Ֆիլատելֆիոյ «Գնար» երգչախումբը եւ իսկոյն Ուաշինկթընէն հրաւիրուեցաւ որպէս Voice of America-ի հայկական բաժնի վարիչ՝ մինչեւ 1995: Հոն եւս հիմնեց «Անի» Երգչախումբը, եւ գոյգ երգչախումբերը «Գնար»ն ու «Անի»ն գիրար կը լրացնէին երկու հայաշատ համայնքներէն ներս ներդրակալօրէն: Վերջին անգամ գինք տեսայ Ուաշինկթընի Հայ Եկեղեցու մէջ ուր հրաւիրուած էի իմ վերջին երկու գիրքերուս

Հայրենադարձ Երեխաներու Համար «Շիրակացու Ծննդարան»-ին Մէջ Կը Կազմակերպուի Անհատական Ուսուցում

ԳԵՈՐԳ ԶԻՉԵԱՆ

Սփիւռքահայ ընտանիքներու համար շատ յաճախ հայրենադարձուելու շարժառիթ կը հանդիսանայ երեխաներու ապագայի հանդէպ մտահոգութիւնը: Ծնողները կը ցանկան, որ իրենց զաւակները Հայաստանի մէջ ո'չ միայն կը թու թիւն ստանան, այլեւ իրենց ապագան կերտեն:

Հայաստանեան դպրոցներուն մէջ, սակայն, շատ յաճախ հայրենադարձ երեխաները կը բախուին տարբեր ոլորտներու: Երեւանի «Շիրակացու Ծննդարան» միջազգային գիտակրթական համալիրն այն հաստատութիւններէն է, ուր կը մշակուին յատուկ ծրագիրներ, ուսուցման մեթոտներ՝ Հայաստան տեղափոխուած երեխաներուն կրթական գործընթացին ներգրաւելու համար: Անհրաժեշտութեան պարագային նաեւ հոգեբանական աջակցութիւն կը ցուցաբերուի:

«Մեր ուսումնական հաստատութեան մէջ հայրենադարձ երեխաներու համար կը կազմակերպուի անհատական ուսուցում, եթէ ան տուեալ տարիքային խումբի ծրագրային չափորոշիչներով դասաւանդում անցնելու համար բաւարար գիտելիքներ եւ հմտութիւններ, Մայրենիի իմացութիւն չունի: Կը մշակուի համապատասխան անհատական ծրագիր՝ դիմորդին որոշակի ժամանակահատուածին տարիքային խումբի ուսումնական թեան ներառելու համար», «Հայերն այսօր»-ի հետ գրոյցին ըսաւ «Շիրակացու Ծննդարան» միջազգային գիտակրթական համալիրի տնօրէնի խորհրդական եւ Մաթեմատիկայի ամպիոնի վարիչ Գագիկ Թոռչեան՝ աւելցնելով, որ խումբին մէջ որոշակի առանձնապատկութիւններ ունեցող սաներու հանդէպ կը կիրառուին անհատական մօտեցումներ եւ տարբերակուած ուսուցման

մեթոտներ:

Խօսելով հայրենադարձ երեխաներու մօտ նկատուող դժուարութիւններու մասին՝ Գագիկ Թոռչեան նկատեց, որ անոնք հիմնականին մէջ կը բախուին լեզուական, առարկայի ակադեմական գիտելիքներու բացակայութեան, Հանրապետութեան առարկայական ծրագիրներու, այլ համայնքներու մէջ առկայ ծրագիրներու բովանդակային, մշակութային տարբերութիւններու եւ ուսուցչին չտիրապետելու խնդիրներուն: Սակայն անոնց համար կը ստեղծեն այնպիսի միջավայր, որպէսզի յաղթահարեն առկայ բարդութիւնները:

Սաներուն հետ հոգեբանական գրոյցներ կազմակերպելու անհրաժեշտութեան պարագային ձեւարանի հոգեբանական ծառայութիւնը կ'իրականացնէ համապատասխան աշխատանքներ, նաեւ կը միջամտէ հոգեբանութեան կեդրոնը, կ'օգնեն խումբի մանկավարժ-հոգեբանը եւ դասաւանդող ուսուցիչները:


«Ինչ կը վերաբերի արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի լեզուական խոչընդոտներուն, ապա այն բնաւոր խօսքին մէջ առաւել հետ կը յաղթահարուի, դժուարութիւններ կ'առաջանան գրաւոր խօսքին մէջ՝ պայմանաւորուած երկու գրական լեզուներուն մէջ առկայ ուղղագրութիւններու, բառապաշարային եւ քերականական տարբերութիւններով: Այս ամէնը հաշուի առնելով՝ կը կազմուին անհատական ուսուցման ծրագիրներ», -նշեց Գագիկ Թոռչեան:

Զրոյցի ընթացքին պարզ դարձաւ նաեւ, որ գիտակրթական համալիր կը յաճախէ մէջ մօտ 70 հայրենադարձ երեխայ: Համեմատութեան կարգով, հայերէն աւելի լաւ կը խօսին, հայկական մշակութիւն եւ պատմութեան քաջատեղեակ են հիմնականին մէջ Մերձաւոր Արեւելքի երկիրներէն եկած երեխաները:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռ.ձայնել՝ ՎԱՀԷ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

10-Ամեայ Ելոյթ՝ Պատանի Արուեստագետներու Նիւ Եորքի Գառնիկի Սրահին մէջ

Շաբաթ՝ Հոկտ. 20-2018-ի յետմիջօրէին տեղի ունեցաւ երկու տօնակատարութիւն՝ մէկ ելոյթով: Տաղանդաւոր պատանի-պատանուհիներու քաջալերանքի այս ձեռնարկը, որ կը կազմակերպուի անցնող տասը տարիէ ի վեր, բեմ կը հանէ մեր համայնքէն երաժշտական տաղանդ ունեցողները (10-18 տարեկան) Նիւ Եորքի -Carnegie Weill համերգասրահին մէջ: Այս ձեռնարկը նշեց Direct Help for Armenian People (DHAP)-ին Տասնամեակը եւ Մայրաքաղաք Երեւանի-Երեւանին 2800-ամեակը: Բարեսիրական այս կազմակերպութեան հիմնադիր-նախագահ



Զուգերգ՝ Սարին եւ Արիանա Պալեան Քոյրեր

էր: Դաշնակահարներ Դաւիթ Աւետիսեանը, Եանա Բրախիան, եւ Մաքսիմ Յովիքը, Ալեքս Վարդանեանը խոր ըմբռնումով կատարեցին Խաչատուրեանի Վալսը, Իսկ Քամի Հօլը՝ նոյն քան ապրումով Սոնաթինան: Տպաւորիչ էին տաղանդաշատ դաշնակահարներ Մայքըլ Խուրին՝ իր հրամցուցած Պէթհովէինի "Sonata in F minor" - ու եւ Էնտրիւ Պօլտինը Էտ Պաղտասարեանի "Prelude in B minor" ը հրամցնելով:

Սրահին մէջ արձագանգող եւ օդին մէջ թեւածող հնչիւններով մեներգիչ պատանուհիներ՝ Անահիտ Ինջիգուլեանը, Ալիս Մաշէնսքին, Քրիսթինա Քէրէսթէճեանը իրենց քնքոյշ ձայներով խորապէս յուզեցին



Զուրակահար՝ Արն Առաքելեան

Դոկտ. Սվետլանա Ամիրխանեանը ջերմօրէն ողջունեց ներկաները եւ օրուան մասնակիցներն ու ծնողները, զանոնք ներկայացնելով եզրափակիչ տօնական այս համերգին որպէս 2018 տարուան տաղանդաւոր մասնակիցները, որոնք արժանացած էին այսօրուան, քննիչ յանձնախումբի գտումի քննութիւններէն ետք:

Հանդէսին բացումը կատարեց Հոգշ. Տ. Սիմէոն Վրդ. Օտապաշեանը, Ս. Վարդան Մայր Տաճարի առաջնորդական փոխանորդը: Ապա՝ հանդիսավար Եուճիմիա Սարեանը վարեց յայտագիրը հանգամանօրէն ներկայացնելով իւրաքանչիւր պատանի արուեստագէտը:

Համազգայինի Արեգակ



Թաւջութակահար՝ Լորի Նաւասարդեան

պատանեկան երգչախումբէն 17 պատանիներ բեմ բարձրացան իրենց դեկավար Վաղարշակ Օհանեանին առաջնորդութեամբ արժանանալով սրահը լեցնող հանդիսատեսին խանդավառ ծափողջիւններուն: Խումբը ուրախ եւ ներդաշնակ ելոյթով մի քանի հայերէն հայրենասիրական երգեր հրամցուց:

Աւանձին ելոյթ ունեցողներուն մեծամասնութեան նախընտրած երաժիշտը Արամ Խաչատուրեանն



Թուրք Չնագետները Բաբերդի Մէջ Հայկական Եկեղեցի Յայտնաբերած Են

Այժմեան Թուրքիոյ տարածքին մէջ գտնուող Պալքուրթ (հայերէն անուանումը Բաբերդ-tert.am) նահանգի պատմական բերդի տարածքին մէջ թուրք հնագէտները հողի տակ անցած հինաւուրց եկեղեցի ու ջրամբար յայտնաբերած են:

Ինչպէս կը փոխանցէ Պոլսոյ հայկական պարբերականներէն «Հայթերթ»-ը, Բաբերդի նահանգապետ Ալի Համգա Փեհլիւանը նշած է, որ բերդի տարածքին մէջ պեղուած է նաեւ 150-է աւելի գտածոյ, որոնց մէկ մասը կ'ենթարկուի ուսումնասիրութեան ու կը փոխանցուի թանգարան, մաս մըն ալ կը գոյքագրուի: Թուրք նահանգապետը շեշտած է,

է, որ Բաբերդի մէջ ժամանակին իշխած են հռոմէացիները, բիւզանդացիներն ու նաեւ արաբները, սակայն որեւէ կերպ չէ յիշատակած տարածքի հայկական անցեալին մասին:

Բաբերդը կազմած է պատմական Արեւմտեան Հայաստանի Սպեր գաւառէն մաս մը: Ճորոխ գետի աջ ափին գտնուող Բաբերդը պատմական կարիւնէն (էրզրում-tert.am) շուրջ 120 քմ հեռավորութեան վրայ կը գտնուի: 1915 թ.-ին Բաբերդն ունէր 30.000 բնակիչ, ներառեալ՝ 10.000 հայ: Տեղի պատմական բերդը, որ կառուցուած է նահանգի նոյնանուն քաղաք-կեղրոնի հիւսիսը, այժմ կը գտնուի կիսաւէր վիճակի մէջ:

Կարսի Քիւրտերը Կը Խոստովանին՝ «Մենք Մինչ Օրս Հայերու Տանիքներուն Տակ Կ'ապրինք»

Հայաստան-Թուրքիա ներկայիս սահմանէն ընդամէնը 50 մեթր հեռավորութեան վրայ կը գտնուի պատմական հայկական կարս նահանգի Քիլիթթաշ գիւղը: Հայոց ցեղասպանութենէն յետոյ լքուած հայկական տունները բնակեցուած են հարեւան բնակավայրերէն բերուած քիւրտերով, որոնք ալ դարձած են թէ՛ հայերու տուներու, թէ՛ անոնց եկեղեցիներու նոր տէրերը:



Կարսի Տիկոր շրջանին մէջ մտնող այս բնակավայրը ուշադրութիւն կը գրաւէ իր իւրաքանչիւր գեղեցիկ բնութեամբ: Պատմական հայկական գիւղն ու այսօրուան Հայաստանը իրարմէ կը բաժնուին Արփաշա գետով: Գիւղը կառուցուած է Արփաշայի ափին շուրջ 300 մեթր խորութեամբ ձորի մէջ: Այստեղ ընդամէնը 40 տնտեսութիւն կայ: Տեղի ներկայիս բնակիչները կը պատմեն, որ վերջին հարիւր տարուան ընթացքին Քիլիթթաշի մէջ որեւէ նոր տուն չէ կառուցուած: Բոլորը կը բնակին հայերուն ձգած տուններուն մէջ՝ «Մենք մինչ օրս հայերու տանիքներուն տակ կ'ապրինք», - կը խոստովանին քիւրտերը: Աղբիւրը՝ Էրմէնիհաբեր

ՄԱՐԶԱԿԱՆ

Ծանրամարտի Աշխարհի Ախոյեանին ու Փոխախոյեանին «Զուարթնոցում» Դիմաւորեցին Զուռնա-Դիուլով



Աշխարհում աւարտուել է ծանրամարտի աշխարհի առաջնութիւնը: Հայաստանի պատուիրակ օլիմպիական խաղերի փոխախոյեան Գոռ Մինասեանը երկամարտի 450 կգ արդիւնքով գրաւել է երկրորդ տեղը եւ արժանացել արծաթէ պարգեւի: Հայաստանի պատուիրակ օլիմպիական խաղերի փոխախոյեան, Եւրոպայի գործող ոսկէ դափնեկիր Սիմոն Մարտիրոսեանը երկամարտի 435 կգ արդիւնքով նուաճել է աշխարհի ախոյեանի կոչումը եւ արժանացել ոսկէ մետալի:

Այսօր «Զուարթնոց» օղանավակայանում դիմաւորեցին ոչ միայն նրանց հարազատները, այլ բազմաթիւ երկրպագուներ: Նրանց դիմաւորեցին հայկական գոլուհա-դճոլով: Օղանավակայանում էին նաեւ Հայաստանի Ազգային Օլիմպիական կոմիտէի նախագահ Գագիկ Մառուկեանը, ՀՀ սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարի պաշտօնակատար Գաբրիէլ Ղազարեանը:

Աշխարհի ախոյեան Սիմոն Մարտիրոսեանն ասաց, որ հսկայական աշխատանքի եւ մարզիչների խորհրդի շնորհիւ է հասել այդ արդիւնքների:

Յենրիխ Մխիթարեանի Կոլը «Արսենալին» Փրկեց Պարտութիւնից



Անգլիայի ֆուտպոլի պրեմիեր լիգայի 12-րդ տուրի խաղում Լոնտոնի «Արսենալը», որի կազմում հանդէս է գալիս Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը, սեփական դաշտում ոչ-ոքի խաղաց «Վուլվերհեմթոնի» հետ:

Հանդիպման հաշիւը 13-րդ րոպէին բացեց հիւրերի պորտուգալացի յարձակող Կավալերուն: Դաշտի տէրերին վերահաս պարտութիւնից փրկեց Հենրիխ Մխիթարեանը: Մեր ֆուտպոլիստը խաղը չնայած սկսեց պահեստայինների թւում, սակայն 76-րդ րոպէին մտաւ խաղադաշտ, իսկ տասը րոպէ անց հեռահար հարուածով խփեց պատասխան զնդակը:

Այդպիսով, հանդիպումն աւարտուեց ոչ-ոքի՝ 1:1: «Արսենալը» 24 միաւորով մնաց 5-րդ տեղում, իսկ «Վուլվերհեմթոնը»՝ 16-ով 11-րդն է աղիւսակում:

«Մանչեսթեր Սիթին» 3:1 հաշուով տնային յաղթանակ տարաւ «Մանչեսթեր Յունայթեդի» նկատմամբ:

Այս յաղթանակից յետոյ «Մանչեսթեր Սիթին» շրջանցեց «Լիւերպոլին» եւ 32 միաւորով վերադարձաւ առաջին տեղ: «Մանչեսթեր Յունայթեդը» 20 միաւորով 8-րդն է:

Արթուր Վանցեան. ՅՖՖ-ն Դիտարկում է «Ազգային» Ստադիոն Կառուցելու Նախագիծ

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան դիտարկում է երեւանում 33 հազար հանդիսականի համար նախատեսուած «Ազգային» ստադիոն կառուցելու նախագիծ: Այդ մասին լրատուամիջոցների խմբագիրների եւ լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտնել է ՀՖՖ նախագահ Արթուր Վանցեանը: Առաջիկայում ՀՖՖ-ն կ'ընդունի պոտենցիալ ներդրողների եւ աւելի յստակ կ'ընդհանրացնի ծրագիրը, որը հաւանութեան է արժանացել նաեւ ՖԻՖԱ-ի նախագահ Զիանի Ինֆանտինոյի կողմից: «Ինֆանտինոն նշեց նաեւ, որ կը ժամանի նոր ստադիոնի բացմանը

Մեսսին Սպանիայի Առաջնութեան Լաւագոյն Խաղացողի Մրցանակին է Արժանացել

«Բարսելոնայի» յարձակող Լիոնել Մեսսին ստացել է 2017-2018 թթ. Սպանիայի առաջնութեան լաւագոյն խաղացողի մրցանակը:

«Լաւ է, որ Լա Լիգան այս մրցաշրջանում աւելի մրցակցային էր, քան երբեք: Ուզում եմ, որ այդպէս շարունակուի ինչքան հնարաւոր է երկար», - Գազետա.ո.ու-ի հաղորդմամբ՝ ասել է Մեսսին:

Անցած մրցաշրջանում արժենթինացին անցկացրել է 36 հանդիպում «Բարսելոնայի» կազմում, 34 կոլի հեղինակ է եւ օգնել է կատալոնացիներին արժանանալ Սպանիայի ախոյեանի տիտղոսին:



Ներկայ պահին կատալոնացիներն իրենց ակտիւում ունեն 24 միաւոր եւ սպանական առաջնութեան աղիւսակում առաջին տեղում են:

Մատան Որոշել է Տեղափոխուել «Արսենալ»

«Մանչեսթեր Եունայթեդի» սպանացի կիսապաշտպան Խուան Մատան այս մրցաշրջանի վերջում, հաւանաբար, կը հեռանայ անգլիական ակումբից:

TalkSport-ի համաձայն՝ 30-ամեայ ֆուտպոլիստն արդէն ընտրել է այն ակումբը, որտեղ շարունակելու է կարիերան: Խօսքը Լոնտոնի «Արսենալի» մասին է: 2019-ի ամրանը Մատան ստանալու է ազատ գործակալի կարգավիճակ եւ լոնտոնեան ակումբին կը միանայ անվճար: Սպանացի կիսապաշտպանը 2014-ից է հանդէս գալիս «Մանչեսթեր Եունայթեդում», որի կազմում մասնակցել է Անգլիայի ընթացիկ առաջնութեան 9 խաղի, դարձել 1 կոլի ու 1 կոլային փոխանցման հեղինակ:

Մատան «Արսենալի» սպանացի գլխաւոր մարզիչ Ունաի Էմբերիի

Երեք Մետալ Սամպոյի Աշխարհի Առաջնութիւնում

Բուխարեստում աւարտուած սամպոյի աշխարհի առաջնութիւնում Հայաստանի պատուիրակները նուաճել են մէկական արծաթէ եւ պրոնզէ մետալ:

ՀԱՕԿ լրատուական բաժնից յայտնում են, որ փոխախոյեանի պատուին արժանացել է Եւրոպայի քառակի ոսկէ մետալակիր, աշխարհի 2017թ. ոսկէ դափնեկիր, վանաձորցի Տիգրան Կիրակոսեանը /52 կգ: Նրա համաքաղաքացի, աշխարհի հնգակի ախոյեան Գագիկ Ղազարեանի որդին՝ Արսէն Ղազարեանը /74 կգ/ դարձել է պրոնզէ մետալակիր: Նա, ի դէպ, երրորդն է ճանաչուել նաեւ Եւրոպայի այս տարուայ առաջնութիւնում:

Զուգահեռաբար անցկացուել են նաեւ մարտական սամպոյի առաջնութիւնը: Գիւմրեցի Գրիգոր Մխիթարեանը /52 կգ / արժանացել է արծաթէ մետալի:

Բոնդարեանին Նախագահի Կողմից Սպորտի Վաստակաւոր Գործչի Պատուաւոր Կոչման է Արժանացել

«Արարատ 73»-ի ֆուտպոլիստ Սերգէյ Բոնդարենկոն ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանի որոշմամբ ՀՀ ֆիզիքական կուլտուրայի եւ սպորտի վաստակաւոր գործչի պատուաւոր կոչման է արժանացել:

«Հիմք ընդունելով Սահմանադրութեան 136-րդ յօդուածը, ինչպէս նաեւ «Հայաստանի Հանրապետութեան պետական պարգեւների եւ պատուաւոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 5.3-րդ յօդուածի 1-ին մասը եւ 41-րդ յօդուածը.

Ֆուտպոլիստ Սերգէյ Նիկողայի ԲՈՆԴԱՐԵՆԿՈՅԻՆ շնորհել Հայաստանի Հանրապետութեան ֆիզիքական կուլտուրայի եւ սպորտի վաստակաւոր գործչի պատուաւոր կոչում», - ասուած է նախագահի որոշման մէջ:



եւ ինքը կը տեղադրի առաջին քարը, ինչպէս նաեւ կը նպաստի, որ այնտեղ անցկացուեն կարեւոր խաղեր եւ մարզիկ զան Հայաստան», - ասել է Արթուր Վանցեանը:

Անդրադառնալով «Հրազդան» ստադիոնի ճակատագրին՝ Արթուր Վանցեանը յայտնել է, որ այն 26 միլիոն տոլար պարտքի դիմաց գրաւադրուած է HSBC բանկում: Այդ գումարը վճարելուց բացի, անհրաժեշտ կը լինի նաեւ մօտ 100 միլիոն տոլարի ներդրում «Հրազդանը» միջազգային չափանիշի հասցնելու համար: Սակայն ստադիոնի տեղն ու հաղորդակցութեան խնդիրները եւս կարող են յետագայում խանգարել դրա շահագործմանը:

Հայաստանի Հանրապետության Կառավարության

Շարունակուած էջ 6-էն

կառավարութեան եւ ժողովրդի աջակցութեան մասին: «Նորուեկի-իայի Թագաւորութեան կառավարութեան նվերը Ֆրիտյոֆ Նանսենի դիմանկարն է՝ «Նանսեն, կամուրջը բարեկամութեան եւ խաղաղութեան» անուամբ, որի հեղինակն է պոսթոնաբնակ յայտնի նկարիչ Դանիէլ Վարուժան Հեճինեանը, ով Պոսթոնից յատուկ ժամանել է Հայաստան՝ ներկայ գտնուելու այս կարեւոր միջոցառմանը: Նկարն արտայայտում է հայ եւ նորուեկացի ժողովուրդների բարեկամութիւնը, որով Հայաստանը եւ հայ ժողովուրդն իրենց երախտագիտութիւնն են յայտնում մեծ հումանիտար Ֆրիտյոֆ Նանսենին՝ հայ ազգին ցուցաբերած անձնուէր վերաբերմունքի, սրտացալութեան եւ անգնահատելի աջակցութեան համար, ինչպէս նաեւ Նորուեկիայի իշխանութիւններին եւ Նորուեկիայի ժողովրդին՝ 1988թ.-ի երկրաշարժի ժամանակ եւ չետոյ Հայաստանին մարդասիրական մեծ օգնութիւն ցուցաբերելու համար», -ամփոփեց նախարարի պաշտօնակատարը՝ յաւելելով, որ պարոն Հեճինեանը նկարի կրկնօրինակը նուիրել է սփիւռքի նախարարութեանը:

ՀՀ Արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականեանի ողջոյնի խօսքը փոխանցեց ԱԳՆ Եւրոպայի վարչութեան պետ Գազիկ Ղալաչեանը:

Նորուեկիայի Թագաւորութեան պատուաւոր հիւպատոս Թիմոթի Տէյվիտ Սթրեյթին նախաձեռնութեան համար շնորհակալութիւն յայտնեց ՀՀ կառավարութեանը, սփիւռքի նախարարութեանը՝ նշելով, որ արուեստի այս գործը ֆանտաստիկ նուէր է Նորուեկիայի Թագաւորութեանը: Տէյվիտ Սթրեյթին նաեւ յոյս յայտնեց, որ երկու պետութիւնների բարեկամական յարաբերութիւնները առաւել կը սերտանան եւ կը զարգանան:

Նկարի հեղինակ Դանիէլ Վարուժան Հեճինեանը ներկայացրեց դիմանկարի ստեղծման պատմութիւնը, որում Հայաստանի եւ Նորուեկիայի դրօշները խորհրդա-

նշում են երկու ազգերի բարեկամութիւնը, ետեւում Արարատ լեռն է, եւ պատկերի կեդրոնում մեծ մարդասէր Ֆրիտյոֆ Նանսենն է՝ ձեռքին խաղաղութեան խորհրդանիշ աղաւնին: Շնորհակալութիւն յայտնելով սփիւռքի նախարարի պաշտօնակատար Միխիթար Հայրապետեանին՝ արուեստագէտը նշեց, որ սփիւռքում ապրող հայ երիտասարդներին Հայաստանի ամենաերիտասարդ նախարարը կարող է ոգեշնչել եւ ուղեցոյց դառնալ Հայաստան գալու եւ այստեղ հաստատուելու համար:

Ելույթ ունեցաւ նաեւ Լոռու մարզպետ Անդրէյ Ղուկասեանը: «Ուրախ եմ, որ որպէս Լոռու մարզպետ պատիւ ունեմ այսօր մասնակցելու այս կարեւոր միջոցառմանը, ինչը եւս մէկ առիթ է վերահաստատելու մեր երկրների՝ Հայաստանի եւ Նորուեկիայի Թագաւորութեան միջեւ առկայ ամուր, գործընկերային յարաբերութիւնները: Երկրաշարժից կարճ ժամանակ անց Լոռու մարզի Սպիտակ քաղաքում տեղակայուեցին Նորուեկական Կարմիր խաչի վրանները, որոնք դարձան երկրաշարժից տուժածներին առաջին բուժօգնութիւն ցուցաբերող օպերատիւ կէտէրից մէկը: Աւելի ուշ՝ 1989 թուականի Մարտին Նորուեկական Կարմիր խաչի կողմից կառուցուեց ու շահագործման յանձնուեց Սպիտակի հիւանդանոցն իր յարակից կառուցներով: Այսօր, երկրաշարժի 30-րդ տարելիցին ընդառաջ հայ ժողովրդի ու մասնաւորապէս բոլոր լոռեցիներին անունից յայտնում եմ մեր երախտագիտութիւնը՝ դժուարին իրավիճակում յայտնուած Հայաստանին աջակցելու համար», -նշեց Լոռու մարզպետը:

Միջոցառմանը ներկայ էին նաեւ ՀՀ-ում Դանիայի Թագաւորութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Ռուբէն Մազսեն, Շուէտի Թագաւորութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Ուլրիկ Տիդեստրիոմը, Ֆինլանդիայի Հանրապետութեան դեսպան Արիա Մակկոնեն եւ Հայաստանում Շուէտի դեսպանութեան գործերի ժամանակաւոր հաւատարմատար Մարտին Ֆրեդրիկսոնը:

Միակողմանի Զրոյց

Շարունակուած էջ 13-էն

եկեղեցուն վեր է ամէն մի գնահատանքից: 16 տարեկան էիր երբ նստեցիր Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի երգհոնի առջեւ: 1961-ին ես եւ Մարիետան էլ միացանք մասնագէտ երգիչ-երգչուհիներով նորովի համալրուած երգչախումբին: Նշանակում է՝ 60 տարի դու Հայ եկեղեցու վաստակած ծառան ես եւ եկեղեցական երաժշտութեան փոքրաթիւ մասնագէտներից մէկը: Ափսոս, հազար ափսոս, որ պատկան մարմինների ուշադրութիւնից վրիպել է արժանի ձեւով գնահատելու քո ծառայութիւնը հայ երաժշտութեանն ու հայ արուեստին: Վերջին 4-5 տարուայ ընթացքին յաճախ էինք խօսում քո

յոբելեանը նշելու մասին, բայց դու, որպէս ծայրագոյնս համեստ անձնաւորութիւն, խուսափում էիր խօսել այդ մասին: Մի քանի ամիս առաջ, արդէն զայրացած ասացի. «էլ սպասել չկայ, ինքս եմ Միփան երգչախումբի հետ կազմակերպելու քո յոբելեանական երեկոն»: Բայց... աւա՜ղ, ինչպէս ժողովուրդն է ասում՝ «շաբաթը շուտ եկաւ ուրբաթից...»: Դու՛ սիրելի եղբայր Լեւոն, այն քչերից մէկն ես, որ հերոսաբար տարար անիմանալի չարչարանքներ եւ այնքան դիտակցութիւնդ տեղն էր, որ տղամարդավարի մտածեցիր՝ «Եթէ մեռնել կայ, խոխուալս ո՞րն է...» ու բարձրաձայն ասացիր՝ հայդէ՛, հեռու գնացէ՛ք, Աստուած ինձ կանչում է... Բարի ծանապարհ...

10-Ամեայ Ելոյթ

Շարունակուած էջ 16-էն

երգչափումբը կրկին բեմ եկաւ օրուան եզրափակիչ ելոյթով մը, որ յատկապէս նուիրուած էր նորոգ հանգուցեալ շանտին անգուգական վարպետ Շարլ Ազնաւուրին: Անոնք հրամցուցին Ազնաւուրի «Հայաստան» եւ Խոկար Յովհաննէսեանի «Երեբունի-Երեւան» երգերը, արժանանալով յոտնկայս ծափահարութեան:

Փակման արարողութեան ընթացքին գնահատական ծաղկեփունջերու արժանացան անցնող տասը տարիներու ընթացքին անխոնջ աշխատող եւ նահանջել չգիտցող Դոկտ. Սվետլանա Ամիրխանեանը, Մարինա Պաղտասարովնան եւ Եուճինիա Սարեանը: Իսկ Հայաստանի Հանրապետութեան ՄԱԿ-ի նորանշանակ ներկայացուցիչ Դեսպան՝ Տիար Մհեր Մարգարեանը, իր գնահատանքի խօսքերուն հետ այս ժրջան երրորդութեան յանձնեց գնահատարներ:

տաղեր: Մէկ այլ գնահատար տրուեցաւ նաեւ Վաղարշակ Օսանեանին՝ անցնող տասնամեակին երաժշտական խորհրդատուի հանգամանքով իր նուիրեալ ծառայութեան համար:

Թէքէեան Մշակութային Միութեան պատուակալատենապետ՝ Յակոբ Վարդիվառեան հայերէն լեզուով եւ խանդավառօրէն ողջունեց ներկաները եւ շնորհաւորեց կազմակերպողները, որոնք կրցած էին նման ելոյթով ՀԱՅ ՇՈՒՆՁ ներարկել նոր սերունդին հոգիներէն ներս:

Բժշկուհի Իրինա Կակոսեան եւ իր ամուսինը՝ Բժիշկ Քէն Կիրակոսեանը արժանացան յատուկ գնահատանքի օրուան ելոյթին իրենց ցուցաբերած գուրգուրանքին եւ առատաձեռն բարերարութեան համար:

Ֆլօրէնս Աւագեանի Անգլ. Բնագիրէն
Հայացուց՝ Զարմինէ Պողոսեան

Վաստակաւոր Երաժշտագէտ Խմբավար

Շարունակուած էջ 15-էն

Յիրաւի Արսէնի կոթողական աշխատանքը երաժշտական արուեստի բարձր կալուածէն ներս երեք ուղղութեամբ փայլեցաւ, երգչախումբերու կազմութեամբ եւ անոնց երկարատեւ եւ արդիւնաշատ ելոյթներով, Միացեալ Նահանգաց Ուաշինկթընի ռատիօկայանի հայկական բաժնի իր յարատեւ

հաղորդումներով, եւ վերջապէս հայրենասէրի ու արուեստագէտի բացառիկ բարերարութիւններով:

Անշուշտ կորուստը մեծ եղաւ Արսէն Սայեանի շիջումով, եւ սակայն կեանքի գինով իր ընծայած երախտիքը աւելի մեծ եղաւ, հոգեկան եւ արուեստի բարձրագոյն շահարկում եւ ընծայական մը յանուն հայ երաժշտութեան եւ հայ մշակոյթի:

Ապաքինման Մաղթանք

Հ.Մ.Մ.ի վարչութեան անդամներէն ընկ. Յարութիւն Կիւտեշեան, աշխատանքի ընթացքին արկած մը ունեցած է եւ հիւանդանոց փոխադրուած: Ան յաջող գործողութեան ենթարկուելէ ետք այժմ կազդուրման շրջան մը կը բոլորէ:

Հ.Մ.Մ.ի վարչութիւնը շուտափոյթ ապաքինում կը մաղթէ ընկ. Յարութի Կիւտեշեանին:

Գործաւոր Կ'ուզուի

Փաստինայի մէջ Gas Station մը գործաւորի կարիք ունի: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 626-5789200 թիւին:



ARMENIAN
AMERICAN
MUSEUM

**Building Together.
Leaving a Legacy.**

**Կառուցենք միասին:
Փոխանցենք ժառանգութիւն:**



Join the *Groundbreaking Campaign!*



**Permanent
Armenian
Exhibition**
Հայկական
մշտական
ցուցահանդէս

**Traveling
Multicultural
Exhibitions**
Բազմամշակութային
շրջուն
ցուցահանդէսներ

**Performing
Arts
Theater**
Կատարողական
արուեստի
թատրոն

**Demonstration
Kitchen**
Ցուցադրական
խոհանոց

**Learning
Center**
Ուսումնական
Կեդրոն

**Museum
Archives**
Թանգարանի
արխիւներ

Քալիֆորնիոյ Հայ-Ամերիկեան
Թանգարանը եւ Մշակութային կեդրոնը
պատմական շինութիւն է, որ պիտի
կառուցուի Կլենտէյլ քաղաքին մէջ:
Կեդրոնը կը ներկայացնէ մեր
պատմութիւնը, կը պահպանէ մեր
մշակոյթը, եւ կը զօրացնէ մեր համայնքը:
Մասնակցեցէ՛ք առաջին կարգի այս
համաշխարհային եւ Մշակութային
թանգարանի եւ կեդրոնի կառուցումին:

The Armenian American Museum and
Cultural Center of California is a historic
landmark developing in the City of
Glendale. The center will share our
story, preserve our culture, and
strengthen the community. Take part in
building the first world class museum
and cultural center of its kind in
America. Join and support the
Groundbreaking Campaign by
contributing today.

DONATE YOUR \$10 TODAY

**TEXT "MUSEUM" TO 20222
OR VISIT JOINAAM.ORG**

MAILING ADDRESS: 104 NORTH BELMONT STREET, SUITE 205, GLENDALE, CA 91206
The Armenian American Museum and Cultural Center of California is a 501(c)(3) non-profit organization.
Your donation is tax-deductible allowed by law. Federal Tax ID: 47-2465341.

